446

1914
2(075)
U-15

Пущино 4-5 курс
Прим. 19/X 17 грн.

2001

2(075)
Ա-15 աղ

ՆՈՐ ՈՒԽՏ
Ը. տպ.

# ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Սահակ ա. Բահ. Սահակեանց

ՀԱՅԿ-ՏԵՐԱ.
ԱՄ. Ա. ՄՅՍՆԻԿՅԱՆ
Ս. ՅՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Թիֆլիս 1914.

37082-ա.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

# Տ. Տ. ԳԷՈՐԳԵ.

*Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:*

(4817-50)
20432-60



## I

## *ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ԸՆԾԱՑԵԼԸ։

Ս.

*Իսուսի ծննդեան ժամանակներում, երբ հրէաները սպասում էին, թէ Մեսիան պիտի գայ և ազատէ իրանց հռովմայեցիների իշխանութիւնից, Գալիլիայի Նազարէթ քաղաքում ապրում էին Յովակիմ և Աննա բարեպաշտ ամուսինները։ Սրանք ծերացել էին և որդի չունէին։ Համաձայն ժամանակի սովորութեան, իս-*

---

*ԾԱՆՕԹ. Որովհետև Նոր Ուխտը գործ է դրւում նաև պետական դպրոցներում, այս պատճառով նիւթը բաժանուած է երկուսի—աստղանիշ վերնագրերը դասաւանդւում են լոկ պետական դպրոցներում (նաև ոչ աստղանիշները), իսկ ծխական դպրոցներում միմիայն ոչ աստղանիշներ։*

բայէլացիները նախատում էին զաւակ չունեցողներին՝ ասելով թէ նրանք երևի մի գաղտնի յանցանք ունեն, որ Աստուած պատժում է նրանց։ Այս պատճառով բարեպաշտ Յովակիմն ու Աննան շատ էին տխրում ու աղօթում էին Աստծուն, որ իրանց մի զաւակ պարգևէ։ Նրանք խոստում արին, որ եթէ Աստուած իրանց աղօթքը լսէ, պարգևած զաւակը տաճարին կընծայեն։ Աստուած լսեց բարեպաշտների աղօթքը և նրանց մի աղջիկ զաւակ պարգևեց, որին անուանեցին Մարիամ։

Երբ Մարիամը երեք տարեկան դարձաւ, աւանդութեան համաձայն, ծնողները երեխային Երուսաղէմի տաճարը տարան և ընծայեցին Աստծուն՝ ինչպէս որ խոստացել էին։ Յովակիմն ու Աննան դարձան Նազարէթ, իսկ Մարիամը մնաց տաճարում։ Քահանայապետը նրա ուսուցիչն էր, սովորցնում էր սուրբ գիրք կարդալ, աղօթել և տաճարին ծառայել։ Երբ Մարիամը 12 տարեկան դարձաւ, վերադարձաւ Նազարէթ։ Ծնողները մեռել էին, ուստի բնակուեց իւր ազգական Ծերունի հիւան Յովսէփի մօտ։ Փոքր ժամանակից ետոյ Մարիամը նշանուեց Յովսէփի հետ։

*Աստուածածնի համար երկու տօն ենք կատարում—ծնունդը Սեպտեմբերի 8-ին, իսկ տաճարին ընծայելը՝ Նոյեմբերի 21-ին։*





## 2. ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

**Ս. Աետուն։** Աստուած Գաբրիէլ հրեշտակին ուղարկեց Նազարէթ քաղաքը կոյս Մարիամի մօտ, որը Դաւիթ թագաւորի ցեղից էր։

Հրեշտակն ասաց նրան. «Ուրախացիր, Մարիամ, Աստուած քեզ հետ է»։ Երբ կոյսը հրեշտակին տեսաւ, շփոթուեց և մտածում էր, թէ





ինչ կնշանակէ այս ողջոյնը։ Հրեշտակն ասաց նրան. «Մի վախեներ, Մարիամ, դու Աստուածանից շնորհ գտար, մի որդի կունենաս ու նրան կանուանես Յիսուս։ Նա Աստծու որդի կըկոչուի, թագաւոր կլինի Դաւթի տեղը և նրա թագաւորութիւնը վերջ չի ունենայ»։

Մարիամը պատասխանեց. «Ես Աստծու աղախինն եմ, թող այդպէս լինի՝ ինչպէս նրա կամքն է»։ Հրեշտակը հեռացաւ նրանից։

Ա. Ծնունդ։ Յիսուսի ծննդեան ժամանակ Քանանը գտնուում էր հռովմայեցիների իշխանութեան տակ։ Այդ երկրում բնակուում էին հրէաները, որոնք հարկատու էին հռովմայեցիներին։ Կայսրը Օգոստոսն էր. նա իւր կողմից Քանանում կառավարիչ էր նշանակել Պոնտացի Պիղատոսին։ Այդ օրերում Օգոստոս կայսրից հրաման դուրս եկաւ, որ իւր տէրութեան մէջ եղող բոլոր մարդկանցը համարեն, որպէսզի նախ՝ հարկը կանոնաւոր հաւաքեն և երկրորդ՝ իմանան, թէ քանի զինուոր պիտի առնեն։ Սրա համար ամենքը պէտք է գնային իրանց հայրենի քաղաքը՝ ցուցակի մէջ գրուելու համար։

Յովսէփն էլ Նազարէթից գնաց Յուդայի երկիրը՝ Դաւթի քաղաքը՝ Բեթղեհէմ, իբրև տեղացի, որպէսզի Մարիամի հետ իւր անունը գրել տայ ցուցակում։

Երբ Բեթղեհէմ հասան, գիշեր էր։ Քաղաքում չկարողացան բնակարան վարձել, որովհետև աղքատ էին, ուստի իջան քաղաքից դուրս՝ հովիտների այրում, ուր վատ եղանակներին հօտը պահում էին։ Այդ գիշեր Մարիամը մի որդի ունեցաւ, պատեց խանձարուրով և դրաւ մսրի մէջ։

Այն երկրում հովիտները գիշեր ժամանակ ըրսուճն են արածացնում ոչխարները։ Յանկարծ մի հրեշտակ երևաց նրանց՝ լուսով շրջապատած։ Այս բանից շատ վախեցան նրանք։ Այն ժամանակ հրեշտակն ասաց. «Մի վախեցէք, ես ձեզ և բոլոր ժողովրդին մեծ ուրախութիւն եմ աւետում—այսօր ձեզ համար Փրկիչ ծնաւ՝ Դաւթի քաղաքում՝ Բեթղեհէմում։ Այս բանը թող ձեզ նշան լինի—դուք կգտնէք մանկանը հովիտների այրում՝ խանձարուրի մէջ պատած և մսրում դրած»։ Սրանիցետոյ յանկարծ օդը լցուեց բազմաթիւ հրեշտակներով, որոնք Աստծուն օրհնում էին և ասում. «Փառք ՚ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն»—փառք Աստծուն երկնքում, այսուհետև երկրիս վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն պէտք է լինի։

Երբ հրեշտակները երկինք վերացան, հովիտներն ասացին միմեանց. «եկէք, գնանք Բեթղեհէմ և տեսնենք, սա ինչ բան է, որ Աստուած



մեզ յոյժ ուրախ»։ Շտապով եկան և գտան Մարիամին, Յովսէփին և մսուրի մէջ դրած



մանկանը։ Տեսնելուցետոյ վերադարձան և փառաբանում էին Աստծուն իրանց լսած ու տե-





*սածի համար և տարածում էին ամեն տեղ, ինչ որ ասուել էր մանկան մասին։*

*Մարիամն այս բոլոր բանները պահում էր մտքումը։*

*Ութն օրից ետոյ, հրէաների սովորութեան համաձայն, մանկանը թլփատեցին և անունը դրին Յիսուս, ինչպէս ասել էր հրեշտակը։*

*Յիսուսի ծննդեան տօնը կատարում ենք Յունուարի 6-ին, իսկ թլփատութիւնը կամ անուանակոչութիւնը՝ 13-ին։*

### 3. ՏԱՃԱՐԻՆ ԸՆԾԱՅՈՒԻԼԸ

**Մ**ովսէսի օրէնքի համաձայն՝ քառասուն օրից ետոյ, եթէ երեխան արու էր և անդրանիկ, ծնողները տանում էին Երուսաղէմ, նուիրում տաճարին և ապա գոհով ետ գնում։ Հարուստները գոհում էին գառը, իսկ աղքատները՝ մի զոյգ աղաւնի։

Յիսուսի ծնողներն աղքատ էին, ուստի մի զոյգ աղաւնի տարան։

Այդ ժամանակ Երուսաղէմում բնակւում էր մի մարգարէ, որի անունն էր Սիմէօն։ Այս մարդն արդար էր և սպասում էր Մեսիայի գալուն։ Նա Սուրբ Հոգուց իրաւունք ունէր կենդանի մնալ մինչև այդ օրը։ Երբ Յիսուսին տաճար

բերին, Սիմէօնը հոգւով իմացաւ. դուրս՝ եկաւ նրա առաջ. գրկեց. օրհնեց և ասաց. «Տէր, այժմ առ իմ հոգին, որովհետև ես տեսայ Փրկիչ-



չին, որին դու պատրաստել ես բոլոր ազգերի համար. ես տեսայ այն լոյսը, որ պիտի լուսաւորէ հեթանոսներին»։ Ծնողները զարմանում-



էին ծերունու խօսքերի վրայ։ Սիմէօնն օրհնեց մանկանը և Մարիամին ու ասաց. «Սա Իսրայէլի մէջ շատերի համար ընկնելու և կանգնելու պատճառ կլինի, քո սիրտն էլ սրա պատճառով սուր կանցնի։

Այնտեղ էր և Աննա մարգարէուհին, որ 84 տարեկան մի այրի կին էր։ Նա տաճարից երբէք չէր հեռացել. իր օրերը ծոմով և աղօթքով էր անց կացրել ու դիշեր ցերեկ ծառայում էր տաճարին։ Երբ սա Յիսուս մանկանը տեսաւ, գոհացաւ Աստծուց և պատմում էր ամենին, թէ Յիսուսը մարգարէների խոստացած Փրկիչն է՝ Մեսիան է։

*Այդ օրը տօն է։ Տօնի անունն է Տեառնընդառաջ. տօնւում է Փետրուարի 14-ին։*

## 4. ԱՐԵՒԵԼՔԻ ՄՈԳԵՐԸ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ԵԳԻՊՏՈՍ ՓԱԽՉԵԼԸ

**Ա.** Օգոստոս կայսրի ժամանակ Քանանը կոչւում էր Պաղեստինէ և բաժանուած էր չորս մասի—1. Յուդայի երկիր կամ Հրէաստան, 2. Սամարիա, 3. Գալիլիա, 4. Պէրէա կամ Յանկոյս Յորդանանի։ Հրէաստանի և Գալիլիայի կառավարիչները հրեաների թագաւորական տանից էին

և կոչւում էին թագաւորներ։ Այդ ժամանակ Հրէաստանի թագաւորն էր Հերովդէսը, որի օրով



Յիսուսը ծնաւ Բեթղեհէմ քաղաքում։ Յիսուսի ծննդեան ժամանակները արևելքից երեք մոգեր՝



իմաստուններ մեծ բազմութիւնով եկան Երուսաղէմ և հարցնում էին, թէ ո՞րտեղ է հրէաների նորածին թագաւորը, որովհետև մենք տեսանք նրա աստղն արևելքում և եկանք երկրպագութիւն տալու։ Մոգերին առաջնորդում էր մի աստղ։

Հերովդէսն այս բանը լսելուն պէս՝ վախեց, նրա հետ էլ բոլոր երուսաղէմացիները—կարծում էին թէ պատերազմի են եկել։ Ուստի ժողովել տուաւ բոլոր քահանայապետներին և դպիրներին ու հարցնում էր նրանց—ի՞նչ է գրել մարգարէն, ո՞րտեղ պէտք է ծնուէ Յիսուս Քրիստոսը։ Նրանք պատասխանեցին. «Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում»։

Այն ժամանակ Հերովդէսը մոգերին թագուն կանչեց և աստղի երևալու ժամանակն ստոյգ իմանալով նրանցից՝ խորամանկութեամբ ասաց. «Գնացէք Բեթղեհէմ և երբ նրան գտնէք, ինձ էլ իմաց տուէք, որ ես էլ գամ և երկրպագութիւն տամ նրան»։

Մոգերը գնացին։ Աստղը առաջնորդեց նրանց և եկաւ կանգնեց այն տան վրայ, ուր մանուկն էր։ Նրանք չափից դուրս ուրախացան, տեսա մտան այրը և գտան մանկանը իւր մայր Մարիամի հետ. երկրպագութիւն տուին և իրանց հետ բերած գանձերը՝ ոսկի, կնարուկ և զմուռս ընծայ տուին։

Աստուած իմանալով Հերովդէսի չար միտքը, երազում հրամայեց մոգերին՝ եկած ճանապարհով չվերադառնան, այլ ուրիշ տեղով գնան իրանց երկիրը։

Ը. Երբ մոգերը գնացին, Աստծու հրեշտակը Յովսէփին երազում երևաց և ասաց. «Վեր կաց, առ մանկան ու նրա մօրը, փախիր Եգիպտոս և ինձ այնտեղ մինչև ես քեզ կասեմ, որովհետև Հերովդէսը որոնում է մանկանը և կամենում է սպանել»։ Յովսէփը վեր կացաւ, առաւ մանկանն ու մօրը և գիշերով փախաւ Եգիպտոս։

Հերովդէսը, երբ տեսաւ, որ մոգերն իրան խաբեցին, խիստ բարկացաւ, դահիճներ ուղարկեց և կոտորել տուաւ Բեթղեհէմի ու նրա շրջակայքի բոլոր մանուկներին՝ երկու տարեկանից սկսած՝ մոգերի որոշած ժամանակի համաձայն։

Հերովդէսի մահուանիցետոյ Աստծու հրեշտակը նորից երևաց Յովսէփին Եգիպտոսում և ասաց. «Վեր կաց, առ մանկանն ու մօրը և գնա Իսրայէլի երկիրը, որովհետև մեռան նրանք, որոնք մանկան կեանքի հետևից էին ընկել»։ Նա էլ վեր կացաւ, առաւ մանկանն ու մօրը, եկաւ Իսրայէլի երկիրը և բնակուեց Նազարէթ շաղաքում։





ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. Մատենադարան

## 5. ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ

Մանուկ Յիսուսը հասակով աճում էր և հոգւով զօրանում—Աստծու շնորհքը նրա վրայ էր։ Ծնողները ամեն տարի Զատկի տօնին ուխտ էին գնում Երուսաղէմ։ Երբ Յիսուսը 12 տարեկան դարձաւ, նրան էլ հետները տարան։ Տօնի օրերն անցնելուցետոյ՝ ծնողները ուզում էին վերադառնալ, բայց յանկարծ նկատեցին, որ Յիսուսը չկայ։

Կարծելով թէ նա ուղեկիցների հետ գնացած կլինի՝ մի օրուայ ճանապարհ ետ եկան և որոնում էին ազգականների ու ծանօթների մէջ։ Բայց երբ չգտան, նորից դարձան Երուսաղէմ։

Երեք օր որոնելուց ետոյ, գտան տաճարում հրէաների վարդապետների մէջ նստած, ուր լսում էր նրանց, հարցեր էր առաջարկում և պատասխան տալիս առաջարկած հարցերին։ Ամենքն էլ զարմանում էին նրա իմաստուն պատասխանների վրայ։

Երբ ծնողները տեսան նրան, զարմացան։ Մայրն ասաց. «Որդեակ, այդ ինչ բերիր մեր գլխին, հայրդ և ես երեք օր է որոնում ենք քեզ»։ Նա պատասխանեց և ասաց. «Մի՞թէ չը-գիտէիք, որ ես իմ հօր տանը կլինէի»։ Այս խօսքերի միտքը ոչ ոք չհասկացաւ։



Յիսուս դարձաւ նրանց հետ Նազարէթ և հնազանդ էր ծնողացը։ Մայրն այս բոլոր բաները պահում է մտքումը։



## 6. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Ա. Աւետումն։ Հրէից Հերովդէս թագաւորի օրերում մի քահանայ էր ապրում՝ Զաքարիա անունով։ Նրա կնոջ անունը Եղիսաբէթ էր։ Երկուսն էլ արդար էին և Աստծու բոլոր պատուիրանները ճշտութեամբ էին կատարում։ Նրանք զաւակ չունէին, երկուսն էլ ծերացած էին։


Մի անգամ, երբ քահանայական պարտքը կատարելու հերթը Զաքարիային հասաւ, սրբութիւնն մտաւ խնկարկելու համար։ Ժողովուրդը դուրսում աղօթում էր։ Խնկարկելու ժամանակ հրեշտակը երևաց Զաքարիային—նա խիստ վախեցաւ։

Հրեշտակն ասաց. «Մի վախենար, Զաքարիա, քո աղօթքը լսելի եղաւ. Եղիսաբէթ կինդ մի որդի կունենայ և նրա անունը Յովհաննէս կդնես։ Քեզ հետ շատերը կուրախանան նրա ծննդեան վրայ. Աստծու առաջ մեծ կլինի. Իսրայէլի որդիներից կքարոզէ և շատերին դէպի ճշմարիտ Աստուածը կդարձնէ—նա առաջուց Եղիայի նման Աստծու համար ժողովուրդ կը պատրաստէ»։

Զաքարիան պատասխանեց հրեշտակին. «Դա կարելի բան չէ, որովհետև ես էլ, կինս էլ ծերացած ենք»։ Հրեշտակը պատասխանեց. «Ես Գաբ-



րիէլն եմ, որ կանգնում եմ Աստծու առաջ. ես ուղարկուած եմ քեզ աւետելու այս բանը։ Բայց որ դու չհաւատացիր, իբրև պատիժ, համր կմնաս մինչև այն օրը, երբ այս ամենը կկատարուի։



Ժողովուրդը դուրսում սպասում էր Զաքարիային և զարմանում, որ նա սրբութիւնում այդքան ուշացաւ։ Երբ դուրս եկաւ, այլևս չէր կարողանում խօսել։ Նրանք իսկոյն հասկացան, որ այնտեղ մի բան է պատահել։ Զաքարիան նշան-

ներով էր խօսում ժողովրդի հետ և Ինաց պատանուած։ Հերթականութիւնն աւարտելուց յետոյ վերադարձաւ տուն։

Բ. Ծնունդ։ Ժամանակը լրացաւ և Եղիսաբէթը մի որդի ունեցաւ։ Երբ նրա դրացիները և ազգականները իմացան այս բանը, շատ ուրախացան։

Սովորութեան համաձայն եօթն օրից յետոյ պէտք է մանկանը թլփատէին։ Նրա անունը կամենում էին Զաքարիա դնել, բայց մայրն արգելում էր և ասում, թէ նրան Յովհաննէս պէտք է անուանել։ Բարեկամները պատասխանեցին նրան. «Ձեր ազգականների մէջ ոչ ոք այդպիսի անուն չունի»։ Վերջը հօրը հարցրին, թէ նա ինչ անուն կցանկանայ։

Զաքարիան մի տախտակ պահանջեց և նրա վրայ գրեց. «Յովհաննէս է դրա անունը»։ Իսկոյն լեզուն բացուեց, խօսում և օրհնում էր Աստծուն։ Ամենքն էլ զարմանում էին այս բանի վրայ և ասում. «Ինչ պէտք է լինի այս մանուկը»։

Զաքարիան Հոգուով Սրբով լցուեց, մարգարէացաւ և ասաց. «Օրհնեալ է Իսրայէլի տէր Աստուածը, նա այցելեց մեզ և իւր ժողովրդի համար փրկութիւն պատրաստեց։ Իսկ դուն, մանուկ, Բարձրելոյ մարգարէ կլինես, Տիրոջ առջևից կգնաս և նրա համար ճանապարհ կպատրաստես։



Մանուկն աճում էր և հոգուով զօրանում։

Յովհաննէսի ծնողները վաղ մեռան—Ինաց որբ։ Երբ չափահաս դարձաւ, ապրում էր Յուդայի անապատի այրերում և շատ պարզ կեանք էր վարում։ Ուտում էր մարախ և վայրենի մեղր, հագուստը ուղտի բրդից էր, իսկ գօտիկը՝ կաշուից։

## 7. ՅՈՎՀԱՆՆԷՍՆ ԱՂԱՇԱՒՈՒԹԻՒՆ Է ՔԱՐՈԶՈՒՄ ԵՒ ՄԿՐՏՈՒՄ

Երբ Յովհաննէսը 30 տարեկան դարձաւ, Աստուած նրան մարգարէ նշանակեց և ուղարկեց Յորդանանի կողմերը քարոզելու։ Այդ ժամանակ Հռովմի կայսրը Տիբերիոսն էր, իսկ Պոնտացի Պիղատոսը կառավարիչ էր Պաղեստինում։ Նոր մարգարէն այս մասին էր քարոզում. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։ Սխալներդ ուղղեցէք, երկնքի թագաւոր Քրիստոսը գալիս է։ Արդար, բարի գործեր կատարեցէք, որ կարողանաք նրա թագաւորութեանն արժանանալ։

Յովհաննէսի մօտ շատ մարդիկ էին գալիս մկրտուելու, որովհետև վաղուց նոր մարգարէ չէր երևացել։ Նրա մօտ էին գնում երուսաղէմացիները, Հրէաստանի բոլոր ժողովուրդը և Յորդանանի կողմերից։ Եկողները խոստովանում էին

իրանց մեղքերը և խորհուրդ էին հարցնում։ Ով խոստանում էր իւր սխալներն ուղղել, այդպիսիներին մկրտում էր Յորդանանի ջրերում։



Սադուկեցիներից և փարիսեցիներից ևս շատերը եկան նրա մօտ, բայց ոչ թէ խորհուրդ հարցնելու այլ՝ ծաղրելու համար։ Նրանք չէին



եկել մարգարէից խրատ լսելու—փարիսեցիները պարծենում էին, որ իրանք օրէնքն ամբողջովին կատարում են, ուստի և արքայութեան ժառանգ են, իսկ սադուկեցիները չէին հաւատում յարութեան։ Այս պատճառով Յովհաննէսը յարձակուեց նրանց վրայ և ասաց. «Իժի ծնունդներ, ինչ պէս կարող էք փախչել Աստծու բարկութիւնից։ Դուք մի՛ ասէք, թէ հայր Աբրահամ ունենք, նա կպաշտպանէ մեզ։ Ես ասում եմ ձեզ, որ Աստուած կարող է այս քարերիցն էլ Աբրահամի որդիներ յարուցանել։ Արդէն կացինը ծառի արմատին է դրած։ Այն ծառը, որ բարի պտուղ չի բերի, կկտրուի և կրակը կձգուի—ես յայտնում եմ ձեզ, սխալներդ ուղղեցէք»։

Մաքսաւորները ևս եկան Յովհաննէսի մօտ մկրտուելու։ Նրանք հարցնում էին. «Մենք ինչ պէտք է անենք, վարդապետ»։ Յովհաննէսը պատասխանեց. «Օրէնքով սահմանածից աւելի մի պահանջէք—կաշառք չվերցնէք»։ Զինուորները ևս հարցնում էին. «Հապա մենք ինչ անենք»։ Նա պատասխան տուաւ և ասաց. «Ոչ ոքի մի նեղացնէք—ձեր թոշակովը բաւականացէք»։ Ժողովուրդը ևս հարցնում էր և ասում. «Իսկ մենք ինչ անենք»։ Յովհաննէսը պատասխանում էր. «Ով աւելորդ հանդերձ ունի, որ չէ գործ ընում, թող մինը չունեցողին տայ, ով աւելորդ կերա կուբ ունի, թող նոյնպէս վարուէ»։

Այսպիսի իմաստուն խրատների համար ժողովուրդը մտածում էր, թէ մի գուցէ սա լինի Քրիստոսը՝ խոստացեալ Մեսիան։ Մի ուրիշը որ լինէր, այս գովասանքը կընդունէր, բայց Յովհաննէսը խոնարհ կերպով մերժեց և ասաց. «Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց ինձնից եաոյ կգայ ամենից հզօրը, որի ծառան լինելու արժանի չեմ, նա ձեզ կմկրտէ Հոգւով Սրբով ու կրակով։ Նա հեծանոցը ձեռին ունի բռնած, կալը կսրբէ, ցորենը կհաւաքէ շտեմարանում, իսկ յարդն անհանգչելի կրակով կայրէ—ահա նա է ճշմարիտ Մեսիան»։





## II

### ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Երբ Յիսուս 30 տարեկան դարձաւ, Գալիլիայից Յորդանան եկաւ Յովհաննէսի մօտ մկրտուելու համար, բայց Յովհաննէսը զարմանալով մերժեց նրան և ասաց. «Ես պէտք է քեզնից մկրտուեմ, դու ես ինձ մօտ գալիս»։ Յիսուսը պատասխանեց նրան և ասաց. «Մկրտիր ինձ, որովհետև դու ինձնից մեծ ես տարիքով, արդարութիւնը՝ օրէնքը այսպէս պէտք է կատարենք»։ Այս խօսքերը համոզեցին Յովհաննէսին և նա մկրտեց Յիսուսին։

Մկրտութիւնից եաոյ՝ Յիսուս ջրից դուրս եկաւ և ահա երկինքը բացուեց և Յովհաննէսը իւր մէջ տեսաւ ու լսեց, որ Սուրբ Հոգին ա-

ղաՆու կերպարանքով վայր էր իջնում նրա վրայ, իսկ երկնքից ձայն էր գալիս, որ ասում-



էր. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւա նեցի»—ինչ որ կասէ, լսեցէք և կատարեցէք։



## 9. ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Մկրտուելիւնից եաոյ Յիսուս գնաց Անապատ և 40 օր աղօթք անելով ու ծոմ պահելով պատրաստուեց իւր կատարելիք մեծ գործի համար։ Սրանից եաոյ Գալիլիա եկաւ և այնտեղ քարոզում էր երկնքի արքայութեան աւետարանն ու ասում. «Ժամանակը լրացել է, Աստծու արքայութիւնը մօտեցել է, ապաշխարեցէք և հաւատացէք աւետարանին»։ Մեծ բազմութիւն էր հաւաքուել նրա շուրջը՝ Աստծու խօսքը լսելու համար։ Նրանք Գեննեսարէթի լճակի ափին էին, ժողովուրդը խռնուում էր։ Այնտեղ տեսաւ երկու նաւակներ ծովի ափին կանգնած։ Դրանց տէրերը ձկնորսներ էին, դուրս էին եկել ծովափը և իրանց ուռկաններն էին լուանում։ Յարմարութեան համար Յիսուս մտաւ նաւերից մինի մէջ, որ Սիմոնին էր պատկանում և խնդրեց նրան ցամաքից փոքր ինչ հեռացնել։ Յիսուս նստեց նաւակի մէջ և ծովի վրայից քարոզում էր ժողովրդին։

Երբ քարոզը վերջացրեց, ասաց Սիմոնին և նրա եղբայր Անդրէասին. «Նաւակը ծովի խորը տար և ուռկանը ձգիր»։ Սիմոնը պատասխանեց և ասաց. «Տէր, ամբողջ գիշերն աշխատել ենք, ոչինչ չենք բռնել, բայց քո պատուէրի համաձայն՝ ուռկանը կձգենք»։ Եւ երբ նրանք



այս արին, ուռկանը ձկնով լցուեց՝ այնպէս որ քիչ մնաց պատառուէր։ Նրանք նշան տուին ափում



եղող միւս ձկնորսներին, որ գան և իրանց օգնեն։ Եկան և երկու նաւերն էլ, ընկղմելու չափ, ձկնով լցրին։

Երբ Սիմոնն այս չտեսնուած բանը տեսաւ, Յիսուսի ոտներն ընկաւ ու ասաց. «Ինձնից հեռու կաց, Տէր, ես մի մեղաւոր մարդ եմ»։ Ահը պատեց նրան, նոյնպէս նրա մօտ եղողներին, այն է Անդրէասին և Զեբեթիայի երկու որդուցը՝ Յակովբոսին և Յովհաննէսին, որոնք Սիմոնի ընկերներն էին։ Յիսուս ասաց Սիմոնին. «Մի վախենար, դու այսուհետև մարդ որսող կլինես»։

Նրանք ափը հանեցին նաւակները, թողին իրանց գործիները և գնացին Յիսուսի ետևից։

Սրանից ետոյ Յիսուս մի մաքսաւոր տեսաւ՝ Մատթէոս անունով, որ նստած էր մաքսատանը. և ասաց նրան. «Հետևիր ինձ»։ Նա էլ վեր կացաւ և գնաց Յիսուսի ետևից ու դարձաւ նրա աշակերտը։

Այս առթիւ մի անգամ Յիսուս իւր աշակերտներով Մատթէոսի տանը ճաշի էր։ Այնտեղ հրաւիրուած էին նրա բարեկամ մաքսաւորները և փարիսեցիները ևս։ Փարիսեցիները նախանձեցին, որ Յիսուս փոխանակ իրանց մօտ ճաշի գալու՝ մեղաւոր մաքսաւորի մօտ է եկել, ուստի ասացին աշակերտներին. «Ինչո՞ւ է ձեր վարդապետը մաքսաւորների հետ ուտում»։ Երբ Յիսուս այս բանը


Պօղոս
Յովհաննէս
Պետրոս
Յակոբոս Ա.
Յուդա Յ
Սիմօն




Անդրէաս
Յակոբոս Զ.
Բարթողոմէոս
Փիլիպպոս
Թոմա
Մատթէոս

լսեց, ասաց նրանց. «Առողջները բժշկի կարօտութիւն չունեն, այլ՝ հիւանդները. ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղաւորներին»։ Չէ՞ որ դուք փարիսեցիներդ ձեզ արդար էք համարում, ուրեմն առողջ էք, իսկ մաքսաւորներին՝ մեղաւոր, ուրեմն նրանք հիւանդ են—հասկանալի է, որ ես, իբրև բժիշկ, հիւանդ մաքսաւորների մօտ պիտի լինեմ։

Բացի այս հնգից Յիսուս ընտրեց եօթը հոգի ևս՝ ընդամենը 12 և նրանց անուանեց առաքեալներ։ Վերջիններիի անուններն են—6. Փիլիպպոս, 7. Բարթուղիմէոս, 8. Թովմաս, 9. Յակովբոս Ալփեայ, 10. Սիմոն Նախանձայոյզ, 11. Յուդա Յակովբեան և 12. Յուդա Սկարովտացի։

## 10. ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Մի քանի որդեսէր մայրեր ևս լսել էին Յիսուսի մասին։ Նրանք համոզուած էին, որ եթէ Յիսուս իրանց որդուցն օրհնէ, բաղդաւոր կլինեն, ուստի Յիսուսի մօտ բերին, որ օրհնէ նրանց։ Աշակերտներն արգելում էին մայրերին և յանդիմանում, որ հանգիստ չեն տալիս իրանց ուսուցչին։ Յիսուս, երբ այս բանը տեսաւ, բարկացաւ և ասաց. «Թողէք մանուկներին և մի արգելէք դրանց ինձ մօտ գալու, որովհետև երկնքի արքայութիւնն այդպիսիներին է պատկանում։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, ով այս մանուկների նման սիրտ չի ունենայ, չի կարող





մտնել Աստծու արքայութիւնը»։ Յիսուս գրկեց փոքրերին, ձեռը գլխներին դրաւ և օրհնեց։

## 11. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՎԻՃՈՒՄ ԵՆ, ԹԷ ՈՎ Է ՄԵԾ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Նորընտիր առաքեալներն այնպէս էին կարծում, թէ իրանց ուսուցիչը երկրաւոր թագաւոր է, շուտով Պաղեստինէն կվռնէ հռովմայեցիներից, ինքը տէր կվինէ և իրանց էլ մեծ-մեծ պաշտօններ կտայ, բայց չէին կարողանում որոշել, թէ ամենամեծ պաշտօնն ումը կտայ, ուստի Յիսուսի մօտ եկան և հարցրին. «Երկնքի արքայութեան մէջ ո՞վ պիտի լինի մեզնից ամենամեծը»։ Այս խնդրի մասին ճանապարհին շարունակ վիճում էին միմեանց հետ։ Յիսուս նկատեց, որ իւր աշակերտներն իրեն չեն հասկանում, ուստի մի մանուկ կանչեց, կանգնեցրեց նրանց առաջ և ասաց. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, մինչև սրբտով սրա նման մանուկ չդառնաք, չէք կարող երկնքի արքայութիւնը մտնել։ Արդ՝ ով այս մանկան նման սիրտ կունենայ, նա է ամենամեծը երկնքի արքայութեան մէջ։ Ով այսպիսի մանուկներին կընդունէ իմ անունով, կնշանակէ ինձ է ընդունում։ Ով սրանց կգայթակղեցնէ, ամենամեծ պատիժը կտանայ—այնպիսին լաւ կանէ, եթէ իշի երկան կախ անէ վզից և ծովի անդնդում խեղդուէ։ Ուրեմն զգոյշ կացէք մանուկներին գայթակղեցնելուց»։



## 12. * ԿԱՆԱՑԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Կանա քաղաքում հարսանիք կար։ Յիսուսի մայր Մարիամն էլ այնտեղ էր։ Յիսուս իւր աշակերտներով հարսանիք հրաւիրուեց։ Այնտեղ գինին պակասելու վրայ էր։ Մարիամն ասաց Յիսուսին. «Գինի չունեն»։ Յիսուսը պատասխա-



նեց. «Իւր ժամանակին գինի կվինի»։ Մայրը պատուիրեց ծառաներին և ասաց. «Ինչ որ Յիսուս ձեզ ասէ, կատարեցէք»։

Հրէից լուացման սովորութեան համաձայն՝ վեց քարէ սափորներ կային այնտեղ։ Յիսուս

ասաց սպասաւորներին. «Սափորները ջրով լցրէք»։ Նրանք էլ մինչև բերանը լցրին։ Յիսուս ասաց նրանց. «Հիմա առէք, մառանապետին տարէք»։ Նրանք էլ տարան։

Մառանապետը՝ երբ գինի դարձած ջրի համը տեսաւ, չկարողացաւ իմանալ, թէ որտեղից է, ուստի դարձաւ փեսային և ասաց. «Ամենքն էլ սովորաբար առաջ լաւ գինին են տալիս, երբ որ վատը, իսկ դու հակառակն ես արել, լաւ գինին մինչև հիմա պահել ես»։

Այսպէս յայտնեց Յիսուս իւր փառքը և նրա աշակերտները աւելի հաւատացին նրան։

## 13. ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄԻ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԸ

Յիսուս եկաւ Կափառնայում քաղաքը, որ գտնւում էր Գիննեսարէթի ծովակի հիւսիսում, ուր մի հարիւրապետ էր ապրում։ Սա թէև ազգով հռովմայեցի էր և կռապաշտ, բայց հրէաների կրօնը շատ էր սիրում—նրանց համար մի աղօթատուն էր շինել։ Այս հարիւրապետը եկաւ Յիսուսի մօտ, աղաչում և ասում էր. «Տէր, իմ ծառան անդամալոյծ է և չարաչար տանջւում է»։ Յիսուսը պատասխանեց. «Ես կգամ և կբժկեմ նրան»։ Հարիւրապետն ասաց. «Տէր, ես արժանի չեմ, որ դու իմ տունն գաս, մի խօսք ասա և իմ ծառան կբժշկուէ։ Օրինակի համար՝ ես էլ իշխանութեան ներքոյ գտնուող մարդ եմ, իմ ձեռի տակ ունեմ զինուորներ, եթէ ես մինին ասում եմ, գնա, գնում է և միւսին՝ եկ, գալիս է կամ ծառայիս այս բանն արա, անում է»։ Այսպէս էլ դու՝ եթէ հիւանդութեանը հրամայես, կհեռանայ, առողջութեանը պատուիրես, կգայ։

Երբ Յիսուս այս խօսքերը լսեց, զարմացաւ և իրան հետևողներին ասաց. «Ճշմարիտն եմ ասում, Իսրայէլի մէջն էլ այսպիսի հաւատ ունեցող մարդ չտեսայ, բայց ասում եմ ձեզ, շատերը կգան արևելից, արևմուտքից, ինչպէս մոգերն ու այս հռովմայեցին և Աբրահամի, Իսահակի ու Յակովբի հետ արքայութեան մէջ կբազմեն, իսկ արքայութեան որդիները՝ իսրայելացիները կերթան արտաքին խաւարը»։ Յիսուս դարձաւ ու ասաց հարիւրապետին. «Գնա, ինչպէս որ հաւատացիր, այնպէս էլ կը կատարուի»։ Նրա ծառան հէնց այն ժամանակ էլ առողջացաւ։

## 14. *ՏԱՍՆ ԲՈՐՈՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԻԼԸ

Յիսուս Երուսաղէմ գնալիս Սամարիայի և Գալիլիայի սահմանի վրայ պատահեց տասն բորոտների, որոնք հեռու կանգնած աղաղակում էին և ասում. «Յիսուս վարդապետ, ողորմիր մեզ»։ Սրանցից իննը հրէա էին, իսկ մէկը՝ սամարացի։ Երբ Յիսուս նրանց տեսաւ, ասաց. «Գնացէք և

ձեր անձը քահանային ցոյց տուէք»։ Նրանք գնացին և իսկոյն բժշկուեցան։

Դրանցից մինը միայն եա դարձաւ և բարձր ձայնով փառաբանում էր Աստծուն։ Նա Յիսուսի ոտներն էր ընկնում և շնորհակալութիւն անում։

Այն ժամանակ Յիսուս հարցրեց նրան և ասաց. «Չէ որ տասն հոգի բժշկուեցան, հապա ուր են միւսները»։ Նրացից ոչ մէկը չեկաւ Աստծուն շնորհակալութիւն անելու՝ բացի այս սամարացուց։ Յիսուս ասաց նրան. «Վեր կաց և գնա, քո հաւատը քեզ փրկեց»։

## 15. ՓԱՐԻՍԵԱՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐԸ

Այն մարդիկը, որոնք իրանք են իրանց արժանաւորութիւնը չափում, բարեպաշտ համարում, իսկ ուրիշներին արհամարհում, վատաբանում, այդպիսիների համար Յիսուս այս առակը պատմեց.

«Երկու մարդ տաճար գնացին աղօթք անելու։ Նրանից մինը փարիսեցի էր, իսկ միւսը՝ մաքսաւոր։ Փարիսեցին առանձին կանգնած սրբութեան առաջ՝ այսպէս էր աղօթում—շնորհակալ եմ քեզնից, Աստուած, որ ես ուրիշ մարդկանց նման յափշտակող, անիրաւ կամ շնացող չեմ, ինչպէս այս մաքսաւորն է։ Շաբաթը երկու



անգամ ծոմ եմ պահում և իմ բոլոր ստացուածքներից տասանորդ եմ տալիս»։

Իսկ մաքսաւորը գալթի հեռաւոր անկիւնում կանգնած, գլուխը քաշ ձգած՝ իրան մեղաւոր էր համարում, կուրծքը ծեծում և ասում էր. «Աստուած, քաւիր մեղաւորիս»։



Յիսուս գնահատեց երկուսի աղօթքն էլ ու ասաց—մաքսաւորն իրան խոնարհեցրեց, ուստի և արդարացած վերադարձաւ տուն։ Այսպէս՝ ով իրան փարիսեցու նման կբարձրացնէ, կխոնարհի, իսկ ով մաքսաւորի նման կխոնարհէ, կբարձրանայ»։

## 16. ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԸ

Մի մարդ ունէր երկու որդի։ Փոքրն ասաց հօրը. «Հայր, տուր ինձ իմ բաժինը քո հարստութիւնից», այլևս քեզ մօտ չեմ կամենում ապրել։ Հայրը տուաւ նրան իր բաժինը։ Փոքր որդին ստացաւ իր ժառանգութիւնը և գնաց հեռու աշխարհ ու այնտեղ իր ունեցածը վատնեց անկարգ ընկերների հետ՝ անառակ կեանք վարելով։

Երբ բոլորը կերաւ, վերջացրեց, հէնց այն ժամանակ էլ սաստիկ սով ընկաւ։ Նա սկսեց մուրացկանութիւն անել։ Վերջը գնաց այն հեթանոս երկրի քաղաքացիներից մինի մօտ և ծառայութեան մտաւ։ Սա էլ ուղարկեց իր հանդը, որ խոզեր արածացնէ։ Փոքր որդին սոված էր, —զոհ կլինէր, եթէ խոզերի կերած բոյսերի արմատներով էլ կշտանար, բայց այդ էլ չկար։

Միայնութեան մէջ սկսեց մտածել իր ապրածի վրայ և ինքն իրան ասել. «Քանի՛ քանի՛ մշակները իմ հօր տանը ձրի հաց են ուտում, իսկ ես այստեղ քիչ է ՚ՃՈւմ սովամահ լինեմ։ Կգառնամ հօրս մօտ և կասեմ նրան—հայր, ես մեղաւոր եմ քո և Աստծու առաջ, այլևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու, ինձ էլ ընդունիր քո մշակներից մինի տեղ»։

Փոքր որդին դարձաւ հօր մօտ։ Հայրը հեռուից նկատեց նրան. գթաշարժուեց. խղճաց. առաջ վազեց. զոհին ընկաւ և համբուրեց։ Որդին ասաց. «Հայր, ես մեղաւոր եմ քո և Աստ-





ծու առաջ, այլևս արժանի չեմ որդի կոչուելու...»։ Հայրն ասաց իր ծառաներին. «Հանէք

դրա հին շորերը և նորը հագցրէք. մատանի դրէք մատին. կօշիկներ հագցրէք. մսացու եզը մորթեցէք. ուտենք և ուրախանանք, որովհետև իմ այս որդին մեռած էր մեղքի մէջ, կենդանացաւ դղջալով. կորած էր օտարութեան մէջ, գտնուեցաւ հայրենի հարկի տակ»։

Մեծ որդին հանդուգն էր։ Երեկոյեան, երբ աշխատանքը վերջացրեց, տուն դարձաւ և երգի ու պարի ձայներ լսեց։ Ծառաներից մինին կանչեց իւր մօտ և հարցրեց, թէ այդ ինչ ուրախութիւն է։ Նա էլ պատասխանեց. «Եղբայրդ դարձել է, հայրդ մսացու եզը մորթել տուաւ նրա գալստեան պատճառով և ահա ամենքն էլ ուրախանում են։

Սա՝ փոխանակ ուրախանալու եղբօր դարձի վրայ, նախանձով լցուեց, բարկացաւ և տուն չմտաւ։ Հայրը իմացաւ այս բանը—նա թէև իրաւունք ունէր հրամայելու, որ ներս գայ, բայց աղաչում էր և համոզում նրան տուն գալ։ Որդին բարկացած պատասխան տուաւ հօրն ու ասաց. «Այս քանի տարի է քեզ ծառայում եմ, քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել, բայց դու ինձ մի ուլ էլ չտուիր՝ բարեկամներիս հետ ուրախանալու, իսկ այդ որդիդ, որ քո հարստութիւնը կերաւ, նրա համար մսացու եզն ես մորթել»։

Հայրն ասաց նրան. «Որդեակ, դու ամեն ժամանակ ինձ մօտ ես և այն ամենը՝ ինչ որ



ունեմ, քոնն է, բայց դու այժմ պէտք է մասնակցէիր մեր ուրախութեանը, որովհետև քո եղբայրը մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց»։

## 17. ՅԻՍՈՒՍ ԵՒ ԶԱԿՔԷՈՍ

Յիսուս մտաւ Երիքով և անցաւ քաղաքի մէջովը։ Այնտեղ մի հարուստ մաքսապետ էր ապրում, անունը Զակքէոս։ Նա սրտով ցանկանում էր Յիսուսին տեսնել, բայց բազմութեան պատճառով չէր կարողանում, որովհետև կարճահասակ էր։ Յիսուսին տեսնելու ցանկութիւնն այնքան մեծ էր, որ նա ուշք չդարձրեց ժողովրդի ծիծաղին, առաջ վազեց և բարձրացաւ թզենու վրայ, որպէսզի Յիսուս այնտեղովն անցնելիս՝ կարողանայ տեսնել։

Երբ Յիսուս թզենուն հասաւ, վեր նայեց և ասաց. «Զակքէ, շուտ արա, իջիր, այսօր պէտք է քո տանն իջևանեմ»։ Զակքէոսն իջաւ և ուրախութեամբ ընդունեց նրան»։

Այս վարմունքի համար փարիսեցիները տրտնջում և ասում էին թէ՝ էլի մեղաւոր մարդու մօտ գնաց հանգստանալու։ Անպատճառ Յիսուսն այնտեղ կքարոզէր և քարոզի հետևանքն այն է եղել, որ Զակքէոսը առաջ եկաւ ու ասաց. «Տէր,

իմ հարստութեան կէսը կտամ աղքատներին— եթէ մինչեւ զրկել եմ, չորեքպատիկ կվճարեմ»։

Յիսուս ասաց. «Այսօր փրկութիւն եղաւ այս տանը, որովհետեւ սա էլ Աբրահամի որդի դարձաւ— ես եկել եմ, որ այսպիսի կորածներին գտնեմ»։

## 18. * ՅԻՍՈՒՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԽՈՒԼՈՒՀԱՄՐԻՆ

Մի անգամ Յիսուսի մօտ մի խուլուհամր բերին և աղաչում էին, որ ձեռը նրա վրայ դնէ ու բժշկէ։ Յիսուս ամբոխից հեռացրեց հիւանդին. մատներն ականջի մէջ դրաւ. թքեց այնտեղ. լեզուն շօշափեց. վերև նայեց. հոգւոց հանեց և ասաց. «Եփփաթա», որ նշանակում է բացուիր։ Իսկոյն նրա ականջները ցացուեցան և սկսեց ուղիղ խօսել։

Պատուիրեց ոչ ոքի չյայտնել այս բանը, բայց որքան նա արգելում էր, նրանք և՛ս առաւել քարոզում, տարածում էին։

## 19. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑՈՒ ԱՌԱԿԸ

Յիսուս մի օրինականի այս առակը պատմեց։

«Մի մարդ Երուսաղէմից գնում էր Երիքով քաղաքը։ Ճանապարհին ընկաւ աւազակների ձեռը, որոնք վիրաւորեցին անծանօթին, կիսամահ թողին և գնացին։





Պատահմամբ մի քահանայ այդ ճանապարհովն անցաւ։ Տեսաւ նրան, բայց ոչինչ չարաւ— անցաւ ու գնաց։ Եւոյ նոյն տեղովը մի ղևտացի

(դպիր) ևս անցաւ։ Նա էլ չօգնեց և անցաւ ու գնաց։

Եկաւ մի սամարացի ճանապարհորդ։ Երբ սա տեսաւ վիրաւորուածին, խղճաց. իսկոյն իջաւ դրաստից. վերքերը փաթաթեց. վրան ձէթ ածեց. գինի խմացրեց. դրաստի վրայ դրաւ և տարաւ հետևեալ իջևանը։ Միւս օրը, երբ պէտք է հեռանար, երկու դահեկան տուաւ իջևանի տիրոջը և ասաց. «Ինամք տար սրա վրայ և եթէ աւելի ծախսես, վերադարձիս կվճարեմ»։

Այս բանից ետոյ Յիսուս հարցրեց օրինականին. «Սրանցից ո՞րն է ընկերաբար վարուել աւազակների ձեռն ընկած մարդուն», Օրինականն ասաց. «Նա՝ ով ողորմաց, օգնեց վիրաւորին»։ Այն ժամանակ Յիսուս պատասխանեց և ասաց. «Ուղիղ դատեցիր, ուրեմն գնա, դու էլ այդպէս արա»։

## 20. Ա Յ Ր Ի Կ Ն Ո Ջ Լ Ո Ւ Մ Ա Ն

Յիսուս տաճարում ուսուցանում էր։ Նայեց և տեսաւ, որ հարուստները մեծաքանակ փողեր են ձգում գանձանակի մէջ։ Տեսաւ նաև մի այրի աղքատ կին, որ երկու լումա ձգեց այնտեղ։ Յիսուս ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, այս որբևայրին ամենից շատ տուաւ որովհետև հա-





բուստները իրանց աւելորդ ունեցածից Աստծու համար զոհ բերին, իսկ սա իւր աղքատ տեղովը, ինչոր ունէր, բոլորն էլ ձգեց»։

## 21. ՋԱՐԾԱՑԻ ԱՌԱԿԸ

Յիսուս հետևեալ առակն ասաց։ «Մի թագաւոր կամենում էր իւր պարտապանների հետ հաշիւ տեսնել։ Երբ հաշիւն սկսեց, նրան ներկայացաւ բիւր (10,000) քանքարի (20,000,000 ռուբլի) մի պարտապան։ Բայց որովհետև նա չկարողացաւ վճարել, ուստի տէրը հրամայեց նրա կինն ու որդիները և բոլոր ունեցածը ծախել։ Պարտապանը տիրոջ ոտներն ընկաւ, երկրպագութիւն էր տալիս և ասում. «Համբերիր, տէր, բոլորը կվճարեմ—ժամանակ տուր, պարտքս չեմ ուրանում»։ Տէրը հաւանեց ծառայի վարմունքը, խղճաց նրան և ոչ միայն ժամանակ տուաւ, այլև ամբողջ պարտքը ներեց։

Այդ միևնոյն մարդը պատահեց իւր ընկեր ծառաներից մինին, որ իրան հարիւր դահեկան (60 ռբ.) էր պարտ։ Բռնեց նրան, խեղդում էր և ասում. «Վճարիր պարտքդ»։ Ծառայակիցը նրա ոտներն ընկաւ, աղաչում էր և ասում. «Համբերիր, բոլորը կհատուցանեմ, խնդրում եմ ժամանակ տուր»։ Բայց նա չհամաձայնեց, այլ գնաց և բանտարկել տուաւ։

Ընկեր ծառաները, երբ այս բանը տեսան, շատ բարկացան, եկան և իրանց տիրոջը յայտնեցին։ Այն ժամանակ տէրը նրան իւր մօտ կանչեց և ասաց. «Չար ծառայ, ես քո բոլոր պարտքը



ներեցի, որովհետև ինձնից ժամանակ խնդրեցիր, մի՞թէ դու էլ քո ընկերի հետ այդպէս չպէտք է վարուէիր»։ Տէրը բարկացաւ և ծառային մատնեց դահիճներին, որ պարտքն ամբողջապէս պահանջեն։

Իմ երկնաւոր հայրն էլ ձեզ հետ այդպէս կվարուէ, եթէ դուք ներողամիտ չլինէք դէպի ձեր ընկերները»։

Այն ժամանակ մօտ եկաւ Սիմօն Պետրոսը և ասաց. «Տէր, քանի՞ անգամ ներեմ ընկերիս, եթէ նա իմ դէմ մեղանչէ՝ եօթն անգամ բաւական չէ՞»։ Յիսուս պատասխանեց և ասաց. «Ոչ թէ եօթը, այլ եօթանասուն անգամ եօթը»—անվերջ անգամ։

## 22. ՓԱՆԱՆԱՑԻ ԿԻՆԸ

Յիսուս առաջին անգամ դուրս եկաւ Պաղեստինի սահմաններից և եկաւ Տիւրոսի, Սիդոնի կողմերը։ Այստեղ մի քանանացի հեթանոս կին աղաղակում էր նրա ետևից և ասում. «Ողորմիր ինձ, Տէր, Դաւթի որդի, իմ աղջիկը չարաչար դիւահարուում է»։ Յիսուս կնոջը փորձելու համար՝ ոչինչ պատասխան չտուաւ։

Մօտեցան աշակերտները, աղաչում էին Յիսուսին և ասում. «Արձակիր սրան, որովհետև մեր ետևից աղաղակում է»։ Նա պատասխան

տուաւ և ասաց. «Ես ուղարկուել եմ Իսրայէլի տան ոչխարների մօտ և ոչ թէ հեթանոսների»։ Կինը մօտեկաւ, Յիսուսի ոտներն էր ընկնում և ասում. «Տէր, ինձ էս օգնիր»։

Յիսուս պատասխանեց և ասաց. «Լաւ չէ երեխաների ձեռիցը հացն առնել և շներին ձրգել»։ Կինը պատասխանեց. «Ճիշտ է, Տէր, բայց շներն էլ իրանց տէրերի սեղանից ընկած փըշրանքովն են կերակրուում»։

Այն ժամանակ Յիսուս պատասխան տուաւ ու ասաց. «Ո՛վ կին, քո հաւատը մեծ է, թող այնպէս լինի, ինչպէս որ դու ես կամենում»։ Նրա դուստրը նոյն ժամին բժշկուեց։

## 23. ՅԻՍՈՒՍ ՔԱՐՈԶՈՒՄ Է ՆԱԶԱՐԷԹՈՒՄ

Յիսուս հոգւով զօրացած՝ դարձաւ Գալիլիա։ Նրա համբաւը տարածուել էր շրջակայ բոլոր երկրներում։ Ամենքը յարգում էին նրան։

Յիսուս իւր հայրենի Նազարէթ քաղաքը ևս եկաւ և, իւր սովորութեան համեմատ, շաբաթ օրը ժողովրդանոց գնաց ու ցանկութիւն յայտնեց սուրբ գիրքը կարդալու։ Նրան տուին Եսայիա մարգարէի գիրքը։ Երբ բաց արաւ, գտաւ այն տեղը, ուր գրուած էր. «Տիրոջ հոգին իմ վրայ է, որի համար էլ օծեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին աւետիք տալու. սրտով կոտրած



ուածներին բժշկելու. գերիներին թողութիւն քարոզելու. կոյրերին տեսութիւն տալու և Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»։

Այս նիւթի վրայ խօսեց և երբ քարոզը վերջացրեց, գիրքը խփեց, սպասաւորին տուաւ և նստեց ժողովրդանոցի մէջ։ Ամենքն էլ զարմացած՝ նրան էին նայում։ Յիսուս աւելացրեց. «Այսօր ձեր ներկայութեամբ կատարուեց այս գրուածքը»։ Ամենքը վկայում էին այս բանին և զարմանում նրա շնորհալի խօսքերի վրայ, բայց միևնոյն ժամանակ ասում էին—սա հիւսն Յովսէփի որդին չէ՞։ Յիսուս պատասխանեց նրանց. «Դուք ինձ առիպում էք ասելու—բժիշկ, բժշկիր քո անձը. որքան հրաշքներ ես կատարել Կափառնայումի մէջ, այստեղ՝ քո հայրենիքումն էլ արա, որ տեսնենք ու հաւատանք։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, Եղիայի ժամանակ Իսրայէլի մէջ շատ որբևայրի կանայք կային, երբ երկինքը երեք տարի և վեց ամիս փակուեց, այնպէս որ ամբողջ երկրի մէջ սով ընկաւ, սակայն Եղիան, բացի սարեպթացի մի որբևայրի կնոջից, ոչ ոքի մօտ չուղարկուեց»։

Լսողները հասկացան որ իրանց է ակնարկում։ Ամենքն էլ բարկութիւնով լցուեցան ժողովրդանոցի մէջ, քաղաքից դուրս հանեցին և տարան մինչև այն լերան գլուխը, որի վրայ քաղաքն էր շինած, որպէսզի այն բարձր տեղից



վայր ձգեն։ Յիսուս նրանց միջով անցաւ և գնաց։

Հրաշքը գործուեց, բայց ոչ այն ժամանակ երբ նրանք էին կամենում։



## 24. ՀԱՐՈՒՍՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Մի երիտասարդ վարիսեցի մօտեցաւ Յիսուսին և ասաց. «Բարի վարդապետ, ինչ անեմ, որ յաւիտենական կեանք ժառանգեմ»։ Յիսուս ասաց նրան. «Եթէ կամենում ես յաւիտենական կեանք ունենալ, պահիր պատուիրանները»։ Երիտասարդը հարցրեց. «Ո՛ր պատուիրանները»։ Յիսուս պատասխանեց. «Մի սպանիր, մի գողանար, սուտ մի վկայիր, պատուիր քո հօրն ու մօրը և քո ընկերին քո անձի չափ սիրիր»,

Երիտասարդը պատասխանեց. «Այդ ամենը, իմ երեխայութիւնից սկսած՝ պահել եմ, էլ ինչ բան է պակաս ինձ»։ Այն ժամանակ Յիսուս ասաց. «Մի բան պակաս է քեզ, եթէ ուզում ես կատարեալ լինել, ծախիր ունեցածդ, կերակրիր աղքատներին, այն ժամանակ կունենաս երկնքումը գանձ»։

Երբ պատանին այս խօսքերը լսեց, տխուր, տրտում հեռացաւ, որովհետև շատ հարուստ էր։ Եւոյ Յիսուս դարձաւ և ասաց իւր աշակերտներին. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, մալուխը՝ չուանը հեշտութեամբ կանցնէ ասեղի անցքով քան թէ հարուստը Աստծու արքայութիւնը կը-մանէ»։ Աշակերտները շատ զարմացան և ասացին. «Հապա էլ ո՞վ կարող է փրկուել»։ Յիսուս

ասաց. «Մարդկանց հասկացողությամբ դա անկարելի է, իսկ Աստծու օգնությամբ ամեն բան հնարաւոր է»։



## 25. ԱՆՄԻՏ ՀԱՐՍՏԻ ԱՌԱԿԸ

Մի հարուստ մարդու կալուածները առատ պտուղ տուին։ Նա մտածում էր և ասում. «Ի՞նչ անեմ, տեղ չունեմ կալուածքներիս բերքը ամբարելու։ Շտեմարաններս կքանդեմ, աւելի մեծերը կշինեմ, ամեն ինչ այնտեղ կհաւաքեմ, եւոյ կասեմ ինձ—ո՛վ անձն, շատ բարիքներ



ունես՝ շատ տարիների համար ժողոված, կե՛ր, խմի՛ր և ուրախացի՛ր»։

Բայց Աստուած ասաց նրան. «Անմի՛տ, այս գիշեր քո հոգին քեզնից որ պահանջեն, այսքան հարստութիւնդ ի՞նչ պիտի անես»։

Այսպէս՝ ով միայն իւր անձի համար է գանձ հաւաքում, Աստծու մօտ հարուստ չէ։

## 26. ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՋԽԱՐԻ ԵՒ ԴՐԱՄԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Յիսուսի մօտ շատ մաքսաւորներ և մեղաւորներ եկան լսելու նպատակով, Փարիսեցիները և դպիրները տրտնջացին և ասացին. «Սա ընդունում է մեղաւորներին և նրանց հետ բարեկամութիւն անում»։

Այդպիսի մտածողների համար Յիսուս այս առակն ասաց. «Եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ և մինը կորցնէ, արդեօք չի թողնի իննսունինները վարախում և չի գնայ այն կորածի եաւիքը՝ մինչև որ գտնէ։ Եւ երբ գտնէ, ուրախանալով իւր ուսերի վրայ չի՞ դնի և տուն գալով բարեկամներին ու դրացիներին չի՞ կանչի ու չի՞ ասի—ուրախացէ՛ք ինձ հետ, որովհետև իմ կորած ոչխարը գտայ։ Ասում եմ ձեզ, այսպէս էլ երկնքումը ուրախութիւն կլինի մի ապաշխարող մեղաւորի՝ քան թէ իննսուն ինն արդարի համար»։

«Եւ կամ՝ եթէ մի կին տասը դրամ ունենայ և մինը կորցնէ, արդեօք ճրագ չի վառի, տունը չի աւելի և չի որոնէ՝ մինչև որ գտնէ։ Երբ որ գտնէ, բարեկամներին և դրացիներին չի



կանչի ու չի ասի—ուրախացէք ինձ հետ, որովհետև կորած դրամս գտայ։ Ասում եմ ձեզ, այսպէս էլ Աստծու հրեշտակների մօտ ուրախութիւն կլինի մէկ ապաշխարող մեղաւորի համար»։



## 27. * ՅԱՅՐՈՍԻ ԴՈՒՍՏՐԸ ԵՒ ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻՆ

Ա. Յայրոս անունով մի մարդ, որ ժողովրդի իշխաններիցն էր, եկաւ Յիսուսի մօտ, ընկաւ նրա ոտները, աղաչում և ասում էր. «Իմ աղջիկը մահամերձ է, եթէ գաս և ձեռդ նրա վրայ դնես, կառողջանայ»։

Յիսուս գնաց նրա հետ։ Մեծ բազմութիւն հետևում էր նրան։ Տուն չհասած՝ իշխանի ծառաներից մինն եկաւ և ասաց. «Քո աղջիկը մեռաւ, վարդապետին անհանգիստ մի՛ արա»։ Յիսուս ասաց իշխանին. «Մի՛ վախենա, հաւատա միայն։

Յիսուս տուն եկաւ, տեսաւ փողհարներին ու ժողովրդին։ Ամենքը լալիս և ողբում էին։ Յիսուս ասաց. «Մի լաք, նա չէ մեռել, այլ քնած է»։ Ներկայ եղողները ծիծաղեցին, որովհետև գիտէին, որ մեռած է։

Յիսուս բոլորին տանից դուրս հանել տուաւ. առաւ իւր հետ երեխայի հօրն ու մօրը և նրանց, որոնք իւր հետն էին ու մտաւ հիւանդի մօտ, բռնեց նրա ձեռից և ասաց. «Տալիթա կումի», այսինքն՝ աղջիկ, վեր կաց։

Իսկոյն վեր կացաւ աղջիկը և մանեկաւ։ Յիսուս հրամայեց, որ ուտելու բան տան։ Ամենքը զարմացան այս բանի վրայ։



Բ. Սրանից ետոյ Յիսուս եկաւ Նային քաղաքը։ Նրա հետ գնում էին աշակերտները և բազմաթիւ ժողովուրդ։ Երբ քաղաքի դրան մօտեցաւ, տեսաւ մեռել էին տանում— մի այրի կնոջ միակ որդին էր։ Դագաղի ետևից մեծ բազմութիւն էր գնում։ Յիսուս մօտ գնաց և մօրն ասաց. «Մի լար»։ Ետոյ մօտեցաւ, դագաղը շօշափեց։ Տանողները կանգնեցին։ Յիսուս ասաց. «Պատանի՛, քեզ եմ ասում, վե՛ր կաց»։

Մեռելը վեր կացաւ, նստեց և սկսաւ խօսել։

Ամենքին երկիւղը պատեց։ Աստծուն փառք էին տալիս և ասում. «Մեծ մարգարէ է վեր կացել մեր մէջ։ Աստուած իւր ժողովրդին այցելել է»։



## 28. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Յովհաննէսի աշակերտները ևս՝ ինչպէս երբեմն Յիսուսինը, այն կարծիքի էին, որ Քրիստոս երկրաւոր թագաւոր է։ Նա հռովմայեցիներին պիտի արտաքսէ Պաղեստինից և Դաւթի գահի վրայ բազմէ։ Բայց փոխանակ սրան տեսնում են, որ նա բժշկում է հռովմայեցի հարիւրապետի ծառային, բանտում շղթայակապ նըստած իրանց ուսուցչին չի ազատում։ Յովհաննէսի աշակերտների մէջ կասկած մտաւ Յիսուսի Մեսիա լինելու մասին։ Ուսուցիչը շարունակ համոզում էր աշակերտներին, որ Քրիստոս իսկական Մեսիան է, բայց Յովհաննէսի ծանր շղթաները գայթակղեցնում էին նրանց։ Եւ երբ ինքը դժուարացաւ համոզել նրանց, պատուիրեց գնալ և անձամբ տեղեկանալ Յիսուսից։ Այս պատճառով աշակերտներից երկուսին ուղարկեց նրա մօտ հարցնելու. «Դո՞ւ ես այն Մեսիան, որ գալու էիր, թէ ուրիշին սպասենք»։

Աշակերտները եկան Յիսուսի մօտ և գտան նրան շրջապատուած ամեն տեսակ հիւանդներով և յայտնեցին իրանց ուսուցչի պատուէրը։

Յիսուս տեսնելով նրանց թերահաւատութիւնը, պատասխանեց և ասաց. «Գնացէ՛ք, Յովհաննէսին պատմեցէ՛ք, ինչ որ տեսաք—կոյրերը

տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբւում են, խուլերը լսում են, մեռելները յա-



րութիւն են առնում և աղքատներին աւետարանն է քարոզւում։ Եթէ ես իսկական Մեսիա չի-



նէի, այս հրաշքները չէի կարող գործել և վերջըն աւելացրեց՝ երանի նրան ով Յովհաննէսին չի գայթակղուի։

Բ. Յիսուս նկատեց, որ Յովհաննէսի աշակերտներն իրանց ուսուցչին չեն հասկանում և երբ նա եկաւ Փիլիպպեայ Կեսարիայի կողմերը, ուզեց իմանալ, թէ իւր աշակերտներն ինչ կարծիք ունեն իրա մասին, ուստի հարցրեց նրանց.

«Մարդիկ ինձ համար ինչ են ասում—ով է Մարդու Որդին», ով եմ ես։ Նրանք էլ ասացին. «Ոմանք ասում են, թէ Յովհաննէս Մկրտիչն ես, միւսները՝ Եղիան և ուրիշներն էլ՝ Երեմիան կամ մարգարէներից մինն ես»։

Յիսուս հարցրեց. «Իսկ դուք ինչ էք ասում, ով եմ ես»։ Սիմոնն առաջինը պատասխանեց և ասաց. «Դու ես քրիստոսը՝ կենդանի Աստծու որդին»։

Յիսուս ասաց. «Երանի քեզ, Սիմոն՝ Յովհանան որդի, այդ բանը դու չէիր, որ իմացար, այլ իմ երկնաւոր Հայրը իմանալու շնորհ տուաւ քեզ, ուստի ես ասում եմ—ով քեզ նման վիմի հաւատա կունենայ, նրա վրայ էլ կշինեմ իմ ապագայ եկեղեցին, որին դժոխքի դռներն անգամ չեն կարող շարժել։ Քեզ կտամ երկնքի արքայութեան բանալիները, ինչ որ երկրիս վրայ կկապես, կապուած կլինի երկնքումը, ինչ որ

կարձակես երկրիս վրայ, երկնքումն էլ արձակուած կլինի»։ Արգելեց իւր աշակերտներին, որ ոչ ոքի չասեն, թէ նա Յիսուս Քրիստոսն է։

## 29. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՄԱՀԸ

Հերովդէս Թագաւորը խլեց իւր եղբայր Փիլիպպոսի Հերովդիա կնոջը և ամուսնացաւ նրա հետ։ Յովհաննէսը, որպէս մարգարէ, նկատողութիւն արաւ Հերովդէսին և ասաց. «Վայել չէ քեզ, որ դրան կին ունենաս»։ Հերովդէսը բարկացաւ և ուզում էր նրան սպանել, բայց ժողովրդից վախենում էր, ուստի բաւականացաւ բանտարկել տալով։

Թագաւորն ուզում էր Յովհաննէսին վրէժխնդիր լինել և դրա համար յարմար առիթի էր սպասում։ Այդ առիթը չուշացաւ—Թագաւորի ծննդեան օրն էր. մեծ խնջոյք ուներ, ուր ներկայ էին նախարարները, զօրապետները և Գալիլիայի բոլոր մեծամեծները։ Այդտեղ էր և Հերովդիայի աղջիկ Սաղոմէն։ Նա կաքաւեց և շատ դուր եկաւ թէ Թագաւորին և թէ բոլոր սեղանակիցներին։

Թագաւորն ասաց աղջկան. «Խնդրիր ինձնից, ինչ որ ուզում ես և կատանաս՝ մինչև անգամ իմ Թագաւորութեան կէսը»։ Աղջիկը մօրը



հարցրեց. «Ի՞նչ խնդրեմ»։ Նա էլ ասաց. «Յովհաննէս Մկրտչի գլուխը»։

Սաղոմէն Թագաւորի մօտ եկաւ և ասաց. «Ես կամենում եմ Յովհաննէս Մկրտչի գլուխը»։

Թագաւորը շատ տրտմեց, նոր հասկացաւ իւր սխալ առաջարկութիւնը, բայց որովհետև



երդուել էր հիւրերի առաջ, չուզեց խօսքը ետ առնել։ Իսկոյն դահիճ ուղարկեց բանտ և գլխատել տուաւ Յովհաննէսին, գլուխը դրաւ մի սկուտեղի մէջ և աղջկան տուաւ, նա էլ իւր մօրը տարաւ։

Երբ այս բանն իմացան նրա աշակերտները, եկան, դիակը տարան, թաղեցին և յայտնեցին Յիսուսին։

## 30. * ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Մի անգամ Յիսուս վեր առաւ Պետրոսին, Յակովբոսին և Յովհաննէսին ու բարձրացաւ Թափոր լեռը։ Երբ լերան գլուխը հասաւ, Յիսուս սկսաւ աղօթել։ Այդ ժամանակ նրա կերպարանքը փոխուեց՝ պայծառացաւ (այլակերպուեց)—երեսը արևի պէս լուսաւորուեց, իսկ շորերը ձիւնի նման սպիտակ դարձաւ։ Այդտեղ՝ լուսով պատած երևեցան նրան Մովսէս և Եղիա մարգարէները։ Նրանք խօսում էին Յիսուսի հետ՝ ինչ որ Երուսաղէմում պիտի պատահէր նրա հետ։

Պետրոսը քիչ առաջ խօսքով խոստովանել էր Յիսուսի Աստծու որդի լինելը, այժմ աչքով տեսնում է նրա աստուածային կերպարանքը, ուստի և ուրախութիւնից շփոթուած՝ ասում է. «Տէր, եթէ հրամայես, մենք կշինենք երեք տաղավար (վրան) մինը քեզ, միւսը՝ Մովսէսի, իսկ երրորդը՝ Եղիայի համար։

Մինչև որ Պետրոսը խօսում էր, մի լուսաւոր ամպ եկաւ և ամպից ձայն լսուեց, որ ասում էր. «Սա է իմ սիրելի որդին, սրան լսեցէք»։ Աշակերտները, երբ լսեցին այս երկնային ձայնը, զարհուրեցան, գետնի վրայ ընկան և սկսեցին աղօթել։

Այն ժամանակ Յիսուս մօտեցաւ նրանց և ասաց. «Մի վախենաք, վեր կացէք»։ Նրանք վեր



կացան, բայց այլ ևս ոչ ոքի չտեսան՝ բացի Յիսուսից՝ իւր սովորական կերպարանքով։ Յիսուս



արգելեց իւր աշակերտներին այդ մասին ոչինչ չասել՝ մինչև իւր յարութիւն առնելը։

*Պայծառակերպութիւնը տօնում ենք Վարդավառի օրը։*

## 31. ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Յիսուս նստած էր Գալիլիայի ծովի ափին։ Նրա մօտ հաւաքուեց մեծ բազմութիւն։ Յարմարութեան համար նաւ նստեց, իսկ ժողովուրդը կանգնած էր ափի վրայ։

Յիսուս նայեց շրջակայքին և այս առակը պատմեց. «Մի սերմացան դուրս եկաւ ցանելու

և երբ ցանում էր, սերմերից մի քանիսն ընկան



ճանապարհի ամուր հողի վրայ,—եկան երկնքի



թռչուններն ու կերան։ Մի քանիսն էլ ընկան քարքարոտ տեղերում։ Սրանք թէև շուտով բուսան, բայց հողի սակաւութեան պատճառով, երբ արևը ծագեց, չորացան, որովհետև կարճ արմատներ ունէին։ Մի քանիսն էլ ընկան փշոտ հողի մէջ։ Փշերը դուրս եկան և խեղդեցին նրանց։ Իսկ մի քանիսն էլ ընկան պարարտ հողի մէջ և պտուղ տուին, որը հարիւր, որը վաթսուն և որը երեսուն։

## 32. ՈՐՈՄԻ ԱՌԱԿԸ

Յիսուս մի ուրիշ առակ էլ ասաց։ Երկնքի արքայութիւնը նման է այն մարդուն, որ իւր արտումը բարի սերմ ցանեց, բայց երբ մարդիկ քնեցին, թշնամին ծածուկ եկաւ, ցորենի մէջ որոմներ ցանեց ու գնաց։ Երբ ցորենը բուսաւ, որոմներն էլ երևեցան։

Ծառաները նկատեցին այս բանը և եկան տիրոջն ասացին. «Տէր, դու քո արտումը բարի սերմ ցանեցիր, որոմները ո՞րտեղից են»։ Նա պատասխանեց և ասաց. «Այդ թշնամի մարդու արածն էր»։ Ծառաներն ասացին. «Իրաւունք տուր՝ գնանք և արմատից դուրս հանենք»։

Նա պատասխանեց. «Ոչ, մի գուցէ որոմները հանելիս, ցորենն էլ նրանց հետ արմատախիլ անէք, թողէք երկուսն էլ միասին աճեն մին-

չև հունձը, իսկ հնձի ժամանակ կասեմ հնձուորներին՝ առաջ որոմները քաղեցէք և խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ։

## 33. ՄԵԾ ՀՆԹՐԻՓԻ ԱՌԱԿ

Մի մարդ մեծ ընթրիք պատրաստեց և շատերին հացի հրաւիրեց։

Հրաւիրեալները ամենքն էլ հրաժարուեցան գալուց՝ զանազան անհիմն պատճառներով։ Առաջինն ասաց. «Ագարակ եմ գնել, պէտք է գնամ, տեսնեմ, չեմ կարող գալ»։ Միւսն ասաց. «Հինգ լուծ եզն եմ գնել, գնում եմ փորձելու»։ Իսկ երրորդն ասաց. «Կին եմ առել, չեմ կարող գալ»։

Ծառան եկաւ և այս բոլորը յայտնեց տիրոջը։ Տանտէրը բարկացած ասաց ծառային. «Դուրս գնա քաղաքի հրապարակները, փողոցները և հրաւիրիր աղքատներին, խեղճերին, կաղերին և կոյրերին»։ Ծառան ասաց. «Տէր, կատարեցի այնպէս, ինչպէս հրամայեցիր, բայց տանն էլի տեղ կայ»։ Տէրն ասաց ծառային. «Դուրս գնա քաղաքից և ճանապարհի վրայ ումը տեսնես, կանչիր, որպէսզի իմ տունը լցուի։ Ձշմարիտ եմ ասում, առաջին հրաւիրուած մարդկանցից ոչ մէկն իմ ընթրիքը չի ճաշակի»։



## 34. * ՅԻՍՈՒՍ ՍԱՍՏՈՒՄ Է ՄՐՐԿԻՆ

Յիսուս Երուսաղէմից Գալիլիա դարձաւ և կամեցաւ ծովի միւս կողմն անցնել ու քարոզել։ Նաւ մտաւ, աշակերտները հետևեցին նրան։ Եւ ահա ծովի մէջ մեծ փոթորիկ բարձրացաւ՝ այնպէս որ ալիքները նաւը ծածկում էին, իսկ Յիսուս քնած էր նաւի ետևում։



Աշակերտները մօտ եկան, զարթեցրին նրան և ասացին. «Տէր, փրկիր մեզ, կորչում ենք»։ Յիսուս ասաց. «Ի՞նչ վախկոտներ էք, թերահաւատներ»։ Սաստեց քամիներին և խկոյն խաղաղութիւն տիրեց։

Մարդիկ զարմացան այս բանի վրայ և ասում էին. «Սա ինչպիսի անձն է, որ քամիներն էլ, ծովն էլ հնազանդւում են սրան»։

## 35. ԱՅԳՈՒ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Երկնքի արքայութիւնը նման է այն տանուտիրոջ, որ առաւօտը վաղ դուրս եկաւ այգու համար մշակներ վարձելու։ Մշակների հետ օրը մի դահեկան (60 կպ.) խօսելով՝ ուղարկեց իւր այգին։ Ժամը երեքին (9) մօտ դուրս եկաւ, տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում անգործ կանգնել էին և ասաց նրանց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կտամ»։ Նրանք էլ գնացին։ Դարձեալ հրապարակ դուրս եկաւ ժամը վեցին (12) և իննին (3) ու նոյնպէս արաւ։ Ժամը տասն և մէկին (5) դուրս եկաւ՝ ուրիշ պարապ մշակներ գտաւ և ասաց. «Ինչո՞ւ էք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»։ Ասացին նրան. «Որովհետև մեզ ոչ ոք չվարձեց»։ «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կստանաք», ասաց տանուտէրը։

Երեկոյեան այգու տէրը վերակացուին ասաց. «Կանչիր մշակներին և վարձ տուր նրանց»։ Ամենից ուշ եկողներն առաջինը մօտեցան և մի-մի դահեկան ստացան։ Ամենավաղ եկող մշակներն էլ եկան։ Սրանք կարծում էին, թէ աւելի



կստանան, բայց նրանք էլ մի դահեկան ընդունեցին։ Վերջինները տրտնջացին և ասացին. «Մենք օրուայ շոգ ժամանակն ենք աշխատել, իսկ դրանք՝ հով. մենք ամբողջ օրն ենք աշխատել, իսկ դրանք մի ժամ մնայն—մինչէ կարելի բոլորիս էլ հաւասար վճարել»։ Տէրը պատասխանեց և ասաց. «Ընկեր, ես քեզ չեմ զրկում, մենք մի դահեկանով համաձայնեցանք, քո վարձն առ և գնա, քեզ չեմ զրկում—ես կամենում եմ ուշ եկողներին էլ քեզ չափ տալ, մինչէ իշխանութիւն չունեմ իմ փողի հետ այնպէս վարուելու, ինչպէս իմ ցանկութիւնն է—ինչու ես նախանձում իմ առատաձեռնութեան վրայ»։

Այսպէս եղին մշակներն առաջին կլինեն, իսկ առաջինները՝ եղին։

## 35. ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Մի մարդ օտար երկիր էր գնում։ Կանչեց ծառաներին և իւր ունեցածը նրանց յանձնեց—մէկին հինգ քանքար (10,000 ռբլ.) տուաւ, միւսին երկու (4,000), իսկ երրորդին՝ մի (2,000), իւրաքանչիւրին իւր ընդունակութեան համեմատ և շտապով հեռացաւ։

Հինգ քանքար ստացողը գործ դրաւ փողը և նրանով ուրիշ հինգ քանքար ևս շահուեց։ Նոյնպէս և երկու քանքար ստացողը գործ դրաւ և

երկու քանքար աշխատեց։ Իսկ մի քանքար ստացողը գետինը փորեց ու տիրոջ քանքարը թագկացրեց։

Մի քանի ժամանակիցետոյ տէրը վերադարձաւ և նրանցից հաշիւ պահանջեց. Հինգ քանքար ստացողն եկաւ և այսպէս հաշիւ տուաւ։ «Տէր, դու ինձ հինգ քանքար տուիր. փողը գործ դրի, հինգ քանքար աշխատեցի—ահա քեզ 10 քանքարը»։ Տէրը գովեց նրան. «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետև քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանակեմ քեզ։ Իմ գալստեան պատճառով հրաւէր ունեմ՝ միմիայն բարեկամներիս համար, բայց դու ևս կարող ես մասնակցել հրաւէրին»։ Մօտ եկաւ երկու քանքար ստացողն ու ասաց. «Տէր, դու ինձ երկու քանքար տուիր, ահա ուրիշ երկուսը ևս շահել եմ դրանով» Տէրն ասաց նրան. «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետև դու քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանակեմ—դու ևս կարող ես մասնակցել իմ հրաւէրին»։

Մօտ եկաւ մի քանքար ստացողն ու ասաց. «Տէր, ես գիտէի, որ դու խիստ մարդ ես, հընձում ես այնտեղից, ուր չես ցանել և հաւաքում ես, ուր չես փռել, ուստի վախեցայ քեզնից և քո քանքարը գետնի մէջ թաքկացրի—ահա քեզ



քո տուածը»։ Տէրն ասաց. «Չար և վատ ծառայ, երբ դու գիտէիր, որ ես հնձում եմ այնտեղից, ուր չեմ ցանել և հաւաքում, ուր չեմ փռել, ինչու առաջուց չյանձնեցիր իմ արծաթը սեղանաւորներին, որ ես այժմ տոկոսով սպանայի նրանցից։ Առէք դրանից այդ մի քանքարն էլ և տուէք տասն քանքար ունեցողին, իսկ իրան ձըգեցէք խաւար սենեակը, թող այնտեղ լայ և ատամները կրճտացնէ»։



## 36. ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿԸ

Հարստի մէկը հագնում էր թանկագին շորեր—ծիրանի և բեհեզ ու ամեն օր փառաւոր

կեանք էր վարում, Մի աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անունով, որ հարուստի դռանն էր ընկած՝ վէրքերով պատած ու կերակրւում էր նրա սեղանից թափուած փշրանքներով։ Մարդիկ նրան մոռացել էին, շներն աւելի գթոտ էին—գալիս էին նրա վէրքերը լիզում և բժշկում։

Աղքատը մեռաւ։ Հրեշտակները տարան նրան Աբրահամի գոգը—արքայութիւն։ Հարուստն էլ մեռաւ—սրա հոգին տարան դժոխքը։ Երբ վերջինս այնտեղ աչքերը բաց արաւ և հեռուից նկատեց Ղազարոսին Աբրահամի գոգում նստած, աղաղակեց ու ասաց. «Հայր Աբրահամ, խղճա ինձ, ուղարկիր Ղազարոսին, որ մատի ծայրը ջրով թաց անէ ու պապակած լեզուս զովացնէ, որովհետև այս կրակի բոցերի մէջ տանջւում եմ»։ Աբրահամը պատասխանեց և ասաց. «Յիշիր, որդեակ, դու քո կենդանութեան ժամանակ վայելում էիր բոլոր երկրային բարութիւնները, իսկ Ղազարոսը զրկուած էր. այժմ նա պիտի այստեղ մխիթարուէ, իսկ դու՝ տանջուես։ Բացի դրանից մեր և ձեր մէջ մեծ անդունդ կայ, այնպէս որ՝ ոչ այստեղից ձեզ մօտ կարելի է անցնել և ոչ այդտեղից մեզ մօտ գալ»։

Հարուստն ասաց. «Եթէ այդպէս է, աղաչում եմ, հայր, գոնէ ուղարկիր Ղազարոսին մեր տունը, ես հինգ եղբայր ևս ունեմ, թող գնայ նրանց զգուշացնէ, որ նրանք էլ չգան այս տանջանքի



տեղը»։ Աբրահամը պատասխանեց. «Նրանք ունեն Մովսէս և մարգարէներ, թող նրանց ասած-



ները կատարեն, այստեղ չեն գայ»։ Հարուստը

պատասխանեց. «Ոչ, հայր Աբրահամ, եթէ մեռելներից մինը գնայ, նրան աւելի շուտ կլսեն և կապաշխարեն»։ Աբրահամը կրկնեց. «Երբ Մովսէսին և մարգարէներին չեն լսում, եթէ մեռելներից մինը յարութիւն առնէ և նրանց մօտ գնայ, դարձեալ չեն հաւատայ»։

## 37. ՏԱՆ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ

Տան կոյսեր իրանց լապտերները վեր առան և գնացին փեսային դիմաւորելու։ Դրանցից հինգը յիմար՝ անզգոյշ էին, իսկ հինգ իմաստուն՝ զգոյշ։ Յիմարները միայն իրանց ձէթով լիքը լապտերները հետները տան, իսկ իմաստունները լապտերների հետ աւելորդ ձէթ ևս վեր առան։ Փեսան ուշացաւ — ամենքի քունը տարաւ։

Կէս գիշերին աղաղակ բարձրացաւ — ահա փեսան գալիս է։ Բոլոր կոյսերը վերկացան և լապտերները պատրաստեցին։ Յիմարների լապտերները անցնելու վրայ էին, աւելորդ ձէթ մոռացել էին վերցնել, ուստի դիմեցին իմաստուններին և ասացին. «Ձեր ձէթից մի փոքր էլ մեզ տուէք, մեր լապտերները հանգչում են»։ Իմաստունները պատասխանեցին. «Եթէ ձեզ էլ տանք, մեզ բաւական չի լինի, գնացէք ծախողների մօտ և գնեցէք ձեզ համար»։





Եւ երբ նրանք ձէթ առնելու գնացին, վեր-
սան եկաւ. իմաստուհները նրա հետ հարսանքա-
տունը մտան և դուռը փակեցին։ Ետոյ յիմար
կոյսերն էլ եկան և ասացին. «Տէր, տէր, դուռը
բաց արա»։ Քեսան պատասխանեց. «Ես ձեզ չեմ
ճանաչում» և դուռը բաց չարաւ։

Ուրեմն արթուն կացէք, որովհետև չգիտէք,
թէ Մարդու Որդին ո՛ր օրը և ո՛ր ժամին կգայ»։

## 38. ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Աշխարհիս վերջին օրը Յիսուս ամպերի վր-
րայ նստած՝ հրեշտակներով պատած կգայ այս
աշխարհը կենդանի մեռածներին դատելու։ Ետոյ բոլոր մարդիկ կժողովուեն
նրա մօտ. նա կբաժանէ արդարներին մեղաւորներից, ինչպէս հովիւը ջոկում է ոչխարներին
այծերից։ Ոչխարներին կկանգնացնէ իւր աջ կողմը, իսկ այծերին՝ ձախ։

Այն ժամանակ Յիսուս թագաւորը կասէ աջ
կողմը կանգնողներին. «Եկէք, ժառանգեցէք այն
արքայութիւնը, որ աշխարհի սկզբից պատրաստուած է ձեզ համար, որովհետև սոված էի, կերակրեցիք ինձ. ծարաւ էի, խմացրիք. օտար էի,
ձեր տուն ընդունեցիք. մերկ էի, հագցրիք. հիւանդ էի, խնամեցիք. բանտումն էի, տեսութեան
եկաք»։ Այն ժամանակ արդարները կպատասխա-



նեն. «Մենք քեզ երբ տեսանք սոված և կերակրեցինք կամ ծարաւ և խմացրինք. երբ տեսանք
քեզ օտար և մեր տունն ընդունեցինք կամ մերկ՝
հագցրինք. երբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտում ու տեսութեան եկանք»։ Այն ժամանակ
թագաւորը կասէ. «Ճշմարիտն եմ ասում ձեզ,
ինչ որ իմ փոքր եղբայրներից մինին արիք, ինձ
արիք»։

Ետոյ կասէ ձախ կողմում կանգնածներին.
«Հեռացէք ինձնից դէպի յաւիտենական կրակը,
որ պատրաստուած է սատանայի համար, որովհետև սոված էի, չկերակրեցիք, ծարաւ էի, չըխմացրիք. օտար էի, ձեր տուն չընդունեցիք.
մերկ էի, չհագցրիք. հիւանդ և բանտումն էի,
չայցելեցիք»։ Նրանք էլ կպատասխանեն. «Տէր
երբ տեսանք քեզ սոված, կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ
և չծառայեցինք»։ Այն ժամանակ Յիսուս պատասխան կտայ և կասէ. «Ճշմարիտն եմ ասում
ձեզ, ինչ որ իմ փոքրիկ եղբայրներից մինին
չարիք, ինձ չարիք»։

Սրանից ետոյ մեղաւորները կգնան դէպի
յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ դէպի յաւիտենական կեանքը։

## 39. ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ ԵՒ ԻՆՆԸ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յիսուսի եռակից մեծ բազմութիւն էր գընում։ Քրկիչը ժողովրդին սեռնելուն պէս՝ լեառը բարձրացաւ աշակերտների հետ, սկսաւ քարոզել ու ասել—

Ս. *1) «Երանի՛ հոգւով աղքատներին, երկնքի թագաւորութիւնը նրանցն է. 2. երանի՛ սգաւորներին, նրանք պէտք է մխիթարուեն. 3. երանի՛ հեզահոգիներին, երկիրս նրանք պէտք է ժառանգեն. 4. երանի՛ արդարութեան համար սոված և ծարաւներին, նրանք պէտք է կշտանան. 5. երանի՛ ողորմածներին, նրանք պէտք է ողորմութիւն գըտնեն. 6. երանի՛ սրտով սուրբերին, նրանք պէտք է Աստծուն տեսնեն. 7. երանի՛ խաղաղութիւն անողներին, Աստծու որդիք պիտի կոչուեն. 8. երանի՛ արդարութեան համար հալածուածներին, երկնքի արքայութիւնը նրանց է։ 9. երանի՛ ձեզ, երբ իմ պատճառով կ'նախատուէք և կ'հալածուէք. ուրախացէք, ձեր վարձքը չի մոռացուի երկնքում—մարգարէներին էլ այդպէս հալածեցին։*

Ռ. «Չկարծէք թէ ես եկել եմ Մովսէսի օրէնքները կամ մարգարէների գրուածները քանդելու։ Ոչ, ես չեմ եկել քանդելու՝ այլ պակասը լրացնելու։





Օրինակի համար առաջին մարդկանցն ասուեց—1, Սուտ մի երդուիր, այլ Աստծուն տուած երդումդ կատարիր։ Բայց ես ասում եմ ձեզ՝ բնաւ մի երդուէք՝ ոչ երկնքի անունով, որ Աստծու աթոռն է. ոչ երկրիս անունով, որ նրա պատուանդանն է. ոչ Երուսաղէմի անունով, որ մեծ թագաւորի քաղաքն է։ Ձեր խօսքը թող լինի—այո՝ այո և ոչը՝ ոչ— սրանից աւելին չարի գործն է»։

2. «Դուք լսել էք, որ հին օրէնքում ասուած է, թէ աչքի տեղ աչք և ատամի տեղ ատամ։ Բայց ես ասում եմ ձեզ՝ չարին մի հակառակէք, այլ՝ եթէ մինը քո ա՛ջ ծնօտին ապտակէ, շուռ տուր միւսն էլ և եթէ մինը կամենայ ուժով քո շապիկն առնել, այդպիսի մարդուն վերարկուդ էլ տուր»։

3. «Դուք լսել էք, որ հին օրէնքում ասուած է, թէ քո ընկերին պէտք է սիրես, իսկ թշնամուդ՝ատես։ Բայց ես ասում եմ ձեզ —սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին և աղօթք արէք նրանց համար, ովքեր ձեզ չարչարում և հալածում են, որպէսզի կարող լինէք ձեր երկնաւոր Հօր որդիքը լինել, որի արեգակը ծագում է և՛ չար և՛ բարի մարդկանց վրայ և անձրև թափում՝ թէ արդարների և թէ մեղաւորների վրայ։ Եթէ դուք սիրէք միայն ձեզ սիրողներին՝ ինչ աւելի բան արած



կլինէք, չէ՞ որ մաքսաւորներն էլ նոյնն են անում։ Եթէ որ միայն ձեր բարեկամներին ողջունէք, ինչ աւելի բան արած կլինէք, չէ՞ որ մեղաւորներն էլ նոյնն են անում։ Ուրեմն եղէք կատարեալ ինչպէս ձեր երկնաւոր հայրը կատարեալ է»։

4. Զգո՛յշ կացէք ձեր տալիք ողորմութեան մասին, որ մարդկանց առաջ չանէք՝ նրանց ցոյց տալու համար, մի՛ գուցէ վարձ ևս չստանաք ձեր երկնաւոր հօրիցը։ Երբ դու ուզենաս ողորմութիւն տալ, փող փչել մի՛ տուր, ինչպէս կեղծաւորներն են անում ժողովրդանոցներում և հրապարակներում՝ մարդկանցից փառաւորուելու համար։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ նրանց վարձը հէնց այդ է։ Բայց երբ դու ողորմութիւն տաս, թող քո ա՛ջ ձեռը չիմանայ, թէ ձախն ինչ գործեց, թող քո ողորմութիւնը ծածուկ լինի և քո Հայրը, որ ծածուկն էլ տեսնում է, յայտնի կհատուցանէ քեզ»։

5. «Երբ դու աղօթես, կեղծաւորների նման մի՛ վարուիր, որոնք սիրում են ժողովրդանոցներում և հրապարակներում կանգնել և աղօթել որ մարդիկ նրանց տեսնեն։ Ճշմարիտն եմ ասում, որ այդպիսիների վարձը հէնց այդ է։ Իսկ դու, երբ աղօթես, մտի՛ր քո սրտի սենեակը. դռները փակի՛ր և ծածուկ աղօթի՛ր քո Հօրը, և քո Հայրը, որ ծածուկն էլ տեսնում է,

յայտնի կհատուցանէ քեզ։ Աղօթելիս շատ մի խօսիր հեթանոսների նման, որոնք կարծում են, եթէ շատ խօսեն, Աստուած կլսէ։ Ուրեմն դուք այսպէս աղօթք արէք.—«Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մեր-ոց պարտապանաց և մի առներ զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն»։

6. «Երբ դուք պաս պահէք, կեղծաւորների նման մի տրտմէք, որոնք իրանց տխուր դէմքով կամենում են ցոյց տալ մարդկանց, թէ պահում են։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, հէնց այդ է նրանց վարձը։ Բայց երբ դուք պահես, օծիր գլուխդ իւղով, լուա երեսդ և քո Հայրը, որ ծածուկն էլ տեսնում է, յայտնի կհատուցանէ քեզ»։

7. «Ձեր գանձերը երկրիս վրայ մի հաւաքէք, ուր ցեցն ու ուտիճը ապականում են և գողերը գետնի տակ փորում են ու գողանում։ Ձեր գանձերը հաւաքեցէք երկնքումը, ուր ոչ ցեց կայ, ոչ ուտիչ և ոչ գողերը գետնի տակը կփորեն ու կգողանան, որովհետև ուր ձեր գանձերն են հաւաքուած, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի»։



8. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել—կամ մինին կատէ, միւսին կսիրէ և կամ մինին կպատուէ, միւսին կարհամարհէ։ Դուք չէք կարող և՛ Աստծուն և՛ մամոնային ծառայել»։

9. «Դրա համար էլ ասում եմ ձեզ, հոգու համար հոգ մի անէք, թէ ինչ պէտք է ուտէք կամ ինչ պէտք է հագնէք։ Չէ՞ որ ոգին կերակրից և մարմինը շորից բարձր է։ Մտիկ արէք երկնքի թռչուններին՝ ոչ վարում են, ոչ հնձում և ոչ ամբարներումը ժողովում, բայց ձեր երկնաւոր Հայրը կերակրում է նրանց—մի՞թէ դուք նրանցից աւելի չէք։ Ձեղնից ո՞րը հիմա հոգս անելով իւր հասակի վրայ մի կանգուն կարող է աւելացնել։ Եւ ինչու էք հոգս անում շորերի համար,—մտիկ արէք վայրի շուշանին, թէ ինչպէս է աճում—ոչ աշխատում է և ոչ մանում։ Սողոմոն անգամ իւր բոլոր փառքերի մէջ նրանց մինի նման շոր չհագաւ։ Եթէ վայրի խոտը, որ այսօր կայ և վաղը կրակ պիտի ձգուէ, Աստուած այդպէս է հագցնում, հապա ո՞րքան աւելի ձեզ համար կհոգայ, թերահաւատներ։ Սրա համար էլ աւելորդ հոգ մի անէք, թէ ինչ ուտենք, ինչ հագնենք։ Այդ տեսակ բաները հեթանոսներն են խնդրում, որովհետև ձեր երկնաւոր Հայրը գիտէ այն ամենը, ինչ որ ձեզ հարկաւոր է։ Դուք խնդրեցէք Աստծու արքա-

յուԹիւնը և նրա արդարուԹիւնը, իսկ ՚ինացածն առանց խնդրելու կստանաք»։

10. Մի դատէք ուրիշներին, որ նրանք էլ ձեզ չդատեն։ Ինչ դատաստանով ուրիշին դատէք, նրանով էլ պիտի դատուէք։ Ինչ չափով որ չափէք, նրանով էլ կչափուէք։ Ի՞նչու եղբօրդ աչքի շիւղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝ ոչ։ Կամ ի՞նչպէս ես ասում եղբօրդ, Թող քո աչքի շիւղը հանեմ, այն ինչ քո աչքումը գերան կայ։ Կեղծաւոր, առաջ քո աչքի գերանը հան և ապա մտածիր եղբօրդ աչքի շիւղը հանելու»։

11. «Խնդրեցէ՛ք՝ կստանաք, որնեցէ՛ք կգտնէք. ծեծեցէ՛ք դուռը, բաց կանեն։ Ո՞վ է այն հայրը, որից իւր որդին հաց խնդրէ, մի՞Թէ քար կտայ, կամ ձուկն ուզէ, մի՞Թէ օձ կըտայ նրան։ Ուրեմն դուք որ չար էք, գիտէք ձեր որդիներին բարի պարգևներ տալ, հապա ո՞րքան աւելի ձեր Հայրը, որ երկնքումն է, բարի բաներ կտայ նրանց, ովքեր խնդրում են իրանից»։

«Այն ամենը՝ ինչ որ կամենում էք, որ մարդիկ անեն ձեզ, այնպէս էլ դուք արէ՛ք նրանց—ի՛սկ սա է օրէնքը և մարգարէուԹիւնը»։

12. «Նեղ դռնովը ներս մտէ՛ք, որովհետև լայն դուռը և ընդարձակ ճանապարհը դէպի կորուստ է տանում—այդ ճանապարհով գնացողների Թիւը շատ է։ Դրա հակառակ՝ նեղ



է այն դուռը և ճանապարհը, որ դէպի կեանք է տանում և քչերն են նրան գտնում»։

13. «Զգո՛յշ եղէք սուտ մարգարէներից, որոնք ոչխարի շորերով են, իսկ ներսից յափշտակող գայլեր են։ Իրանց պտղից պիտի ճանաչէք նրանց—մի՞Թէ կարելի է փշից խաղող քաղել կամ տատասկից՝ Թուզ։ Այսպէս ամեն բարի ծառ՝ բարի պտուղ է բերում, իսկ չար ծառը՝ չար պտուղ է տալիս։ Ով ինձ կանչէ տէ՛ր, տէ՛ր, երկնքի արքայուԹիւնը չի մտնի, այլ նա միայն, ով կկատարէ Հօրս կամքը»։

«Դրա համար էլ նա՝ ով իմ խօսքերը լսում և կատարում է, նման է այն իմաստուն մարդուն, որ իւր տունը քարի վրայ շինեց։ Եկան անձրևները. վարարեցին գետերը. փչեցին քամիները. խփեցին տանը և տունը չկործանուեց, որովհետև հիմքը քարի վրայ էր դրած։ Իսկ նա՝ ով իմ խօսքերը լսում է, բայց չէ կատարում, նման է անխելք մարդուն, որ իւր տունը աւազի վրայ շինեց։ Եկան անձրևները. վարարեցին գետերը. փչեցին քամիները. խփեցին տանը և տուն ընկաւ—նրա կործանումը մեծ էր»։

Երբ Ցիսուս այս բոլորը վերջացրեց, ժողովուրդը զարմացաւ նրա քարոզի վրայ։

## 40. ՅԻՍՈՒՍԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼՈՒԱՑՄԱՆ, ԿԵՐԱԿՐԻ, ՊԱՀՔԻ ԵՒ ՇԱԲԱԹԸ ՍՐԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ։

Ա. Երուսաղէմից եկած դպիրները և փարիսեցիները Յիսուսի մօտ եկան և ասացին. Ի՞նչու քո աշակերտները *ծերերի աւանդութիւնից* անցնում են—լուացու հաց ուտելիս ձեռները չեն լուանում»։ Նա էլ պատասխան տուաւ նրանց և ասաց. «Կեղծաւորներ, Եսայի մարգարէն շատ լաւ է մարգարէացնել ձեզպէսների մասին—այս ժողովուրդը շրթունքով է պատուում ինձ, իսկ սրտով շատ հեռի է ինձնից։ Նրանք Աստծու օրէնքները թողած՝ մարդկանց պատուէրներն են սովորցնում։ Լսեցէք և իմացէ՛ք—ոչ թէ այն է պղծում մարդուս, ինչ որ բերանն է մտնում, այլ այն՝ ինչ որ բերանիցն է դուրս գալիս, որովհետև ինչ որ բերանիցն է դուրս գալիս, սրտիցն է, ահա այն է պղծում մարդուս։ Սրտիցն են դուրս գալիս չար խորհուրդները, սպանութիւնները, շնութիւնները, գողութիւնները, սուտ վկայութիւնները. ահա սրանք են մարդուն պղծողը, իսկ անլուայ ձեռով հաց ուտելը մարդուս չէ պղծում»։

Մի փարիսեցի աղաչում էր Յիսուսին, որ իւր մօտ ճաշ ուտէ։ Յիսուս չմերժեց նրա խընդիրը։ Փարիսեցին տեսնելով, որ Յիսուս ճաշից առաջ չլուացուեց, զարմացաւ։ Յիսուս ասաց.



«Դուք փարիսեցիներդ բաժակի և պնակի դրսի կողմը սրբում էք, այն ինչ ձեր ներքինը լիքն է չարութիւնով։ Անմիտներ, կարծում էք՝ ինչ որ դրսիցը մաքուր է, ներսիցն էլ մաքուր կլինի»։ Դպիրները և փարիսեցիները բարկացան այս նըկատողութեան համար, յարձակուեցան նրա վրայ զանազան հարցերով, որպէսզի նրանից մի սխալ խօսք լսեն և բամբասեն։

Բ. Մի անգամ շաբաթ օրը Յիսուս անցնում էր արտերի միջով։ Աշակերտները սովեցին, սկսեցին հասկ պոկել և ուտել։ Երբ փարիսեցի-



ներն այս բանը տեսան, ասացին. «Ահա քո աշակերտներն այն են անում, ինչ որ արժան չէ շաբաթ օրն անել»։ Նա պատասխանեց նրանց և

ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ ինչ արաւ Դաւիթը, երբ սովեց—ինչպէս մտաւ նա Աստծու տունը և առաջաւորութեան հացը կերաւ, որ ոչ ոք իրաւունք չունէր ուտելու՝ բացի քահանաներից։ Կամ չէք կարդացել օրէնքումը, քահանաները շաբաթը պղծում են և անմեղ են համարւում։ Բայց ասում եմ ձեզ, տաճարիցն էլ մեծը կայ այստեղ—Մարդու Որդին նաև շաբաթի տէրն է»։

Յիսուս հեռացաւ և գնաց նրանց ժողովրդանոցը։ Այնտեղ մի մարդ կար, որի ձեռը չորացած էր։ Յիսուսին հարցրին. «Արդեօք շաբաթ օրը կարելի է բժշկել»։ Այս նրա համար ասացին, որ նրանից մի սխալ պատասխան ստանան և սկսեն չարախօսել։ Նա պատասխանեց և ասաց. «Եթէ ձեզնից մէկը մի ոչխար ունենայ, շաբաթ օրը փոսի մէջ ընկնէ, մի՞թէ նրան փոսից չի հանի։ Բայց մարդը ոչխարից որքան բարձր է։ Ապա ուրեմն շաբաթ օրը պէտք է բարի գործել»։ Դարձաւ այն մարդուն և ասաց։ «Ձեռդ մեկնի՛ր»։ Նա մեկնեց և առողջացաւ միւսի նման։ Փարիսեցիները դուրս գնացին և խորհուրդ էին անում, թէ ինչպէս հեռացնեն նրան ասպարիզից։



## 41. ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

Երբ Յիսուս Հրէաստանից Գալիլիա էր դառնում, Սամարիայի միջովն անցաւ և եկաւ Սիւքեար քաղաքը։ Այստեղ էր Յակովբի Ջրհորը։ Յիսուս յոգնած էր, ուստի հանգստացաւ Ջրհորի մօտ, իսկ աշակերտները քաղաք գնացին կերակուր գնելու։

Մօտաւորապէս ժամը վեցն (12) էր։ Քաղաքից մի կին եկաւ Ջուր հանելու։ Յիսուս Ջուր խնդրեց նրանից։ Սամարացի կինը զարմացած ասաց Յիսուսին. «Դու հրէայ ես, ես սամարացի, ինչպէս ես ինձնից Ջուր ուզում»։ Յիսուս պատասխանեց. «Եթէ դու գիտենայիր, թէ ո՛վ է քեզնից Ջուր ուզողը, դու նրանից կենդանի Ջուր կխնդրէիր»։ Կինն ասաց։ «Տէր, դու դոյլ չունես, այս Ջրհորն էլ խորն է, որտեղից կտաս ինձ կենդանի Ջուր, մի՞թէ դու մեծ ես մեր հայր Յակովբից, որ այս Ջրհորը տուաւ մեզ, ինքն այստեղից խմեց, նոյնպէս նրա որդիքն ու անասունները»։ Յիսուս պատասխանեց. «Ով այս Ջրից խմում է, նորից ծարաւում է, իսկ ով իմ տուած Ջրից կխմէ, յաւիտեան չի ծարաւի։ Այն Ջուրը, որ ես կտամ, Ջրի աղբիւր կլինի նրանում, որ յաւիտեան կբղխէ նրա մէջ»։ Կինն ասաց. «Տէր, տո՛ւր ինձ այդ Ջուրը, որ ես միւս անգամ չգամ այստեղից Ջուր տանելու»։



Յիսուս ասաց նրան. «Գնա, կանչիր քո մարդուն և ել այստեղ»։ կինը պատասխանեց. «Ես



մարդ չունեմ»։ Յիսուս ասաց. «Ճշմարիտ ասացիր, թէ մարդ չունեմ, բայց դու հինգ մարդ ես ունեցել և նա, որ հիմա ունես, քոնը չէ»։ կինն ասաց նրան. «Տէր, ես տեսնում եմ, որ դու մարգարէ ես, մեկնիր ինձ այս մութ կէտը—մեր հայրերն այս սարերում աղօթք արին, իսկ դուք՝ հրէաներդ ասում էք, թէ միայն Երուսաղէմում կարելի է աղօթել»։ Յիսուս ասաց. «Դուք երկրպագում էք նրան, որին չէք ճանաչում, իսկ մենք՝ ընդհակառակը։ կին, հաւատա ինձ, որ կգայ ժամանակ, երբ ոչ այս լեռներում կերկրպագէք Հօրը և ոչ էլ Երուսաղէմում. կգայ ժամանակ և այդ ժամանակը հէնց հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգւով և ճշմարտութիւնով կերկրպագանեն Հօրը։ Աստուած հոգի է և նրան երկրպագողները պէտք է հոգւով և ճշմարտութիւնով երկրպագանեն»։ կինն ասաց. «Ձեր ասածն այն ժամանակ կլինի, երբ Մեսիան կամ Քրիստոսը կգայ»։ Յիսուսը ասաց նրան. «Քեզ հետ խօսողը Մեսիան ինքն է»։

Այս խօսքի վրայ եկան աշակերտները։ կինը թողեց կուժը, գնաց քաղաք և մարդկանց ասաց. «Եկէք տեսէք մի մարդ, որ իմ բոլոր գաղտնիքները գիտէ—արդեօք նա չէ Քրիստոսը»։ Շատ քաղաքացիներ եկան տեսնելու նրան։ Այն ժամանակ աշակերտները խնդրեցին Յիսուսին և ասացին. «Ռաբբի, հաց կեր»։ Նա պատասխանեց.

«Ես այնպիսի կերակուր ունեմ ուտելու, որ դուք չգիտէք»։ Աշակերտները հարցնում էին միմեանց. «Արդեօք ով սրա համար ուտելու բան բերաւ»։ Յիսուս ասաց. «Երբ ես ինձ ուղարկողի կամքը կատարում եմ, ահա նա էլ իմ կերակուրն է»։

Սամարացիները եկան և աղաչեցին, որպէսզի մի քանի օր մնայ իրանց մօտ և մնաց այնտեղ երկու օր։ Շատերը հաւատացին նրան և այն կնոջն ասում էին. «Այլևս քո խօսքերով չենք հաւատում, մենք ամեն ինչ ինքներս լսեցինք մեր ականջներով և գիտենք ճշմարտապէս, որ արդարև սա է աշխարհիս Փրկիչը՝ Քրիստոսը՝ խոստացեալ Մեսիան։

## 42. ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ

Յիսուս Երուսաղէմ գնալիս՝ յաճախ գալիս էր Բեթանիա գիւղը։ Այդտեղ կենում էր Ղազարոսը Մարիամ և Մարթայ քոյրերի հետ։

Այս անգամ Ղազարոսը տանը չէր—քոյրերն ընդունեցին Յիսուսին և ամեն կերպ աշխատում էին պատուել թանկագին հիւրին։ Մարիամը նստեց Յիսուսի մօտ և ուշադրութիւնով լսումէր նրա քարոզները, իսկ մարթան աշխատում էր շատ տեսակ կերակուրներ պատրաստել։

Նրանց յարաբերութիւնն այն աստիճան բարեկամական էր, որ Մարթան Յիսուսի մօտ եկաւ և ասաց.





«Տէ՛ր, հոգդ չէ՞, որ քոյրս ինձ մենակ է թո-
ղել խոհացնում, ասա՛ որ գայ և ինձ օգնէ»։
Յիսուս պատասխանեց նրան և ասաց. «Մարթա՛,
դու շատ բաներով ես զբաղուած, բայց մի բան
է պէտք։ Դու աշխատում ես զանազան տեսակ
կերակուրներով պատուել ինձ, մի տեսակ էլ որ
լինի, բաւական է։ Դու կարող ես քրոջիդ բա-
րի օրինակ վերցնել՝ լսել իմ քարոզները—նա բա-
րի մասն է ընտրել, որ ոչ ոք չի կարող խլել
նրանից։ Ով ուզում է ինձ պատուել, թո՛ղ լսէ
իմ խրատները։

## 43. ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մարիամի և Մարթայի եղբայր Ղազարոսը հիւանդացաւ։ Այդ ժամանակ Յիսուս Գալիլիա-
յումն էր։ Քոյրերը մարդ ուղարկեցին Յիսուսի
մօտ այսքանը միայն ասելու. «Տէ՛ր, որին դու
սիրում էիր, հիւանդ է»։ Յիսուս երբ լսեց, ա-
սաց. «Այդ հիւանդութիւնը մեռնելու համար չէ,
այլ Աստծու փառքի համար»։ Բայց մինչև նրա
գալը՝ Ղազարոսը մեռաւ։

Յիսուս երկու օրից ետոյ ասաց աշակերտ-
ներին. «Եկէ՛ք դարձեալ գնանք Հրէաստան, մեր
բարեկամ Ղազարոսը մեռել է»։

Յիսուս դարձաւ Բեթանիա։ Արդէն չորս օր
էր՝ ինչ թաղել էին։ Երուսաղէմից շատերն էին



եկել Մարիամին և Մարթային մխիթարելու։ Երբ
Մարթան լսեց, որ Յիսուս գալիս է, գնաց դիմա-
ւորելու, իսկ Մարիամը տանը նստած էր։ Մար-
թան ասաց Յիսուսին. «Տէ՛ր, եթէ այստեղ լի-
նէիր, իմ եղբայրը չէր մեռնի։ Բայց հաւատա-
ցած եմ, եթէ հիմա էլ Աստծուց եղբօրս հա-
մար կեանք խնդրես, կտայ»։ Յիսուս ասաց
նրան. «Քո եղբայրը յարութիւն կառնէ»։ Մար-
թան ասաց. «Այո՛, գիտեմ, որ նա յարութիւն
կառնէ վերջին դատաստանի ժամանակ», բայց
ես հիմա եմ ուզում։ Յիսուս կրկնեց. «Ես եմ
յարութիւն և կեանք տուողը, ով ինձ հաւատայ,
մեռած էլ լինի՝ կկենդանայ, հաւատո՞ւմ ես այս
բանին»։ Մարթան պատասխանեց. «Այո՛, տէ՛ր,
ես վաղուց եմ հաւատացել, որ դու ես Աստծու
որդի Քրիստոսը»։

Այս խօսքից ետոյ Մարթան գնաց և թա-
քուն կանչեց Մարիամին ու ասաց. «Վարդապետն
եկել է և կանչում է քեզ»։ Երբ նա այս խօս-
քերը լսեց, շուտով վերկացաւ և եկաւ։ Յիսուս
դեռ գիւղը չէր մտել։ Տան եղողները, երբ տե-
սան, որ Մարիամը գնաց, իրանք էլ հետից գնա-
ցին՝ կարծելով թէ գերեզմանն է գնում լաց լի-
նելու։ Մարիամը, երբ տեսաւ Յիսուսին, ոտնե-
րըն ընկաւ և ասաց. «Տէ՛ր, եթէ այստեղ լինէիր,
իմ եղբայրը չէր մեռնի»։ Երբ Յիսուս Մարիա-
մին և նրա հետ եկած հրէաներին տեսաւ լաց

լինելիս՝ սաստիկ յուզուեց և ասաց. «Ո՞րտեղ էք թաղել Նրան»: Նրան պատասխանեցին. «Տէ՛ր, եկ և տես»: Յիսուս զերեզմանը որ տեսաւ, արտասուեց: Հրէաներն ասում էին. «Տեսէք ինչպէս է սիրում նրան»: Ոմանք էլ ասում



էին. «Մի՞թէ սա, որ կոյրի աչքերը բաց արաւ, չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Յիսուս մօտեցաւ գերեզմանին և ասաց. «Վեր առէ՛ք քարը»: Մեռածի քոյր Մարթան ասաց.



«Տէ՛ր արդէն հոտ բռնած կլինի, որովհետև չորս օրուան թաղած է»: Յիսուս ասաց. «Չասացի՞ քեզ, եթէ հաւատաս, քո եղբայրը յարութիւն կառնէ»: Քարը վեր առան: Յիսուս աչքերը երկինք բարձրացրեց և այսպէս աղօթեց. «Հայր, շնորհակալ եմ քեզնից, դու ինձ միշտ լսել ես, խնդրում եմ այս անգամ էլ լսես, որ այս ժողովուրդը հաւատայ, թէ դու ես ինձ ուղարկել»: Այս ասաց և բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարոս, վեր կաց, դուրս եկ»: Մեռելը դուրս եկաւ ոտներն ու ձեռները պատանած, իսկ երեսը վարշամակով պատած: Յիսուս ասաց. «Արձակեցէ՛ք կապերը և թողէ՛ք գնայ»: Ներկայ եղող հրէաները տեսան այս հրաշքը և շատերը հաւատացին Յիսուսին:





## III

### 44. ՅԻՍՈՒՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ղազարոսի թաղման ներկայ եղող հրեաներից մի քանիսը Երուսաղէմ եկան և պատմեցին փարիսեցիներին, թէ ինչպէս Յիսուս Ղազարոսին յարութիւն տուաւ։ Իսկոյն քահանայապետները և փարիսեցիները ժողով արին և ասացին. «Ի՞նչ անենք, այն մարդը շատ հրաշքներ է անում, եթէ այդպէս թոյլ տանք, ամենքը կհետևեն նրան և հռովմայեցիները կգան ու կնուաճեն մեր երկիրը»։ Այն տարուայ քահանայապետ Կայիափան ասաց. «Դուք ոչինչ չգիտէք և հեռուն չէք էլ մտածում, աւելի լաւ է մի մարդ մեռնէ՝ քան թէ ամբողջ ազգը կորչէ»։ Բայց նա այս խօսքերն իրանից չասաց, այլ մարգարէացաւ, որ



Յիսուս պիտի մեռնէր ազգի համար։ Այն օրից սկսած քահանայապետը և փարիսեցիները որոշեցին սպանել նրան։ Ուստի հրաման արձակեցին ամեն տեղ, որ ով նրա տեղն իմանայ, իմաց տայ իրանց, որ բռնեն։

Յիսուս հեռացաւ Բեթանիայից։ Հրէից զատիկը մօտ էր. այդ տօնին շատերը ուխտ էին գալիս Երուսաղէմ։ Նրանք հետաքրքրւում էին և հարցնում միմեանց, թէ տօնի օրն արդեօք Յիսուս կգայ Երուսաղէմ թէ ոչ։

### 45. ՅԻՍՈՒՍԻ ՕԾՈՒՄԸ ԲԵԹԱՆԻԱՅՈՒՄ

Յիսուս Զատկից վեց օր առաջ եկաւ Բեթանիա, ուր կենում էր յարութիւն առած Ղազարոսը։ Այդտեղ նրա համար ընթրիք պատրաստեցին—Մարթան ծառայում էր սեղանին, Ղազարոսը ևս ներկայ էր, իսկ Մարիամը մի լիտր նարդոսի ազնիւ իւղ առաւ, օծեց Յիսուսի ոտները և իւր երկար մազերովը սրբում էր։ Տունը լցուեց անուշ իւղի հոտով։ Յիսուսի աշակերտ Յուդա Իսկարովտացին, որ նրանց գանձապահն էր և երբեմն գողանում էր, ինչ որ արկղն էին ձգում, ասաց. «Աւելի լաւ չէր լինի, որ այդ իւղը երեք հարիւր դահեկանի ծախուէր և աղքատներին բաժանուէր»։

Յիսուս ասաց. «Ինչու էք վիրաւորում Մարիամին, դա մի գեղեցիկ բան արաւ իմ վերաբերութեամբ։ Աղքատներն ամեն ժամանակ ձեզ մօտ են, երբ կամենաք, կարող էք նրանց օգ-



նել, իսկ ես՝ ոչ միշտ։ Դա ինչ կարող էր, արաւ —առաջուց մարմինս օծեց՝ ի նշան իմ թաղման։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, ամբողջ աշխարհի մէջ, ուր էլ իմ աւետարանը քարոզուի, այս բանը չի մոռացուի, այլ կյիշուի իբրև բարի գործ»։



## 46. ՅԻՍՈՒՍ ՄՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄ

Հաւակից մի շաբաթ առաջ՝ մեր Տաղկա զարդի կիւրակէին Յիսուս Բեթանիայից Երուսաղէմ եկաւ։ Երբ Ձիթենեաց լերան մօտեցաւ, աշակերտներից երկուսին ուղարկեց և ասաց. «Գնացէք մօտիկ գիւղը, այնտեղ կգտնէք մի կա-



պած էշ և մի աւանակ էլ նրա մօտ, արձակեցէք ու բերէք»։ Աշակերտները գնացին, բերին էշն ու աւանակը և իրանց հանդերձները վրան ձգեցին։ Յիսուս նստեց նրանցից մէնի վրայ և այսպէս գնացին Երուսաղէմ։ Ժողովուրդը երբ

իմացաւ Յիսուսի քաղաք գալը, դուրս եկաւ նրան ընդառաջ՝ պատուով ընդունելու։ Նրանցից շատերն իրանց հանդերձները ճանապարհի վրայ էին փռում, ոմանք էլ ծառերից արմաւենու ճիւղեր էին կտրում ու ճանապարհի վրայ տարածում։ Երբ Յիսուս լերան գլուխը հասաւ, որտեղից քաղաքը երևում էր, դառնացած սրտով ասաց. «Երուսաղէմ, Երուսաղէմ, երանի՛ դու գոնէ այսօր զգայիր, թէ ո՛րն է քո օգուտը, բայց այդ բանը դու չես տեսնում։ Կըգան օրեր, երբ քո թշնամիները կպաշարեն քեզ և հիմնայատակ կանեն, որդիքդ կկոտորեն ու չեն թողնի քարը քարի վրայ կանգնէ, որովհետև դու քո օգուտը չհասկացար»։ Ժողովուրդը, որ առջևից և ետևից գնում էր, աղաղակում և ասում էր. «Ովսաննա Դաւթի որդուն, օրհնեալ է Տիրոջ անունով եկող թագաւորը, ովսաննա բարձրումը»։ Եւ երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ և ամեն մէկը հարցնում էր. «Ո՞վ է սա»։ «Սա Յիսուսն է, Նազարէթի մարգարէն», պատասխանում էին հարցնողներին։

Յիսուս մտաւ տաճարի Հեթանոսների գաւիթ կոչուած մասը, ուր վաճառում էին ուխտաւորների համար անհրաժեշտ բաներ և դուրս արաւ աղաւնի վաճառողներին, կործանեց փող մանրողների սեղանները և ասաց նրանց. «Գրած է, որ իմ



տունը աղօթքի տուն պիտի լինի, իսկ դուք նրան վաճառատեղ էք դարձրել»։

Նրա մօտ տաճարում գալիս էին շատ հիւանդներ—կաղեր, կոյրեր և նա բժշկում էր նրանց։ Երբ քահանայապետը և տաճարի իշխանութիւնը տեսան այս ամենը և նրան յարգող



նների գովասանական կոչերը, խիստ բարկացան և ասում էին նրան. «Լսո՞ւմ ես, թէ դրանք ինչ են ասում»։ Յիսուս պատասխանեց. «Այո՛, մի՞թէ չէք կարդացել, որ մանուկների և կաթնակերների բերանից պիտի լսէք գովասանական կոչեր»։ Յիսուս թողեց նրանց, գնաց քաղաքից դուրս՝ Բեթանիա և գիշերն այնտեղ մնաց։

## 47. ՅԻՍՈՒՍ ՎԻՃԱԲԱՆՈՒՄ Է ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԵՏ

Ա. Առաւօտեան՝ երբ Յիսուս քաղաք վերադարձաւ, գնաց տաճար քարոզելու։ Քահանայապետները և ժողովրդի ծերերը մօտ եկան և ասացին. «Ի՞նչ իշխանութիւնով ես անում այդ բանները—ո՞վ քեզ իրաւունք տուաւ այստեղ քարոզելու և իշխանաբար վարուելու»։ Յիսուս պատասխանեց և ասաց. «Ես ձեզ մի բան կհարցնեմ, եթէ պատասխանէք, ես էլ ձեզ կասեմ, թէ ինչ իշխանութիւնով եմ այս բաներն անում։ Յովհաննէսի մկրտութիւնը ո՞րտեղից էր՝ երկնքից, թէ մարդկանցից»։ Նրանք մտածմունքի մէջ ընկան. «Եթէ երկնքից ասենք, կասէ մեզ, հապա ինչո՞ւ չհաւատացիք նրան, իսկ եթէ ասենք մարդկանցից, ժողովուրդը կյուզուի, որովհետև ամենքը Յովհաննէսին մարգարէ են ընդունում»։ Սրա համար էլ պատասխանեցին. «Չգիտենք»։ Նա էլ ասաց. «Ես էլ ձեզ չեմ ասի, թէ ինչ իշխանութիւնով եմ անում այս բանները»։

Ա. Դրանից յետոյ վարիսեցիները գնացին և խորհուրդ արին, թէ ինչպէս խօսքով որոգայթ դնեն նրան։ Վարիսեցիներն իրանց աշակերտներին Հերովդէսի մարդկանց հետ Յիսուսի մօտ ուղարկեցին, գովեցին նրան և ասացին. «Վար դպե՛տ, գիտենք, որ դու ճշմարիտ ես ուսու-



ցանում. դու ոչ ոքից չես քաշւում և ոչ երեսպաշտութիւն դիտես. ասա՛ մեզ՝ կայսեր հարկ տալ պէտք է, թէ ոչ»։ Յիսուս նրանց չարութիւնն իմանալով՝ ասաց. «Ինչո՞ւ էք փորձում ինձ, կեղ-



ծաւորներ, ցոյց տուէք ինձ հարկի դահեկանը»։ Նրանք մի դահեկան բերին։ Յիսուս հարցրեց. «Ո՞ւմ է այս պատկերը և գիրը»։ Նրանք պատասխանեցին. «Կայսեր»։ Յիսուս ասաց. «Ուրեմն

կայսրին՝ կայսրին տուէք, իսկ Աստծունը՝ Աստծուն»։ Երբ այս բանը լսեցին, խիստ զարմացան, և գլխակոր հեռացան։

Գ. Մինչև այժմ Յիսուս պաշտպանւում էր թշնամիների յարձակումների դէմ, այժմ ինքն է սկսում յարձակուել մի առակ պատմելով։

«Մի տանուտէր այգի տնկեց. ցանկով պատեց. մէջը հնձան փորեց. աշտարակ շինեց. յանձնեց մշակներին և գնաց ուրիշ աշխարհ։ Երբ պտղի ժամանակը մօտեցաւ, ուղարկեց ծառաներին մշակների մօտ՝ պտուղն ստանալու։ Մշակները ծառաներին բռնեցին—մէկին տանջեցին, միւսին սպանեցին և երրորդին էլ քարկոծեցին։ Դարձեալ մարդիկ ուղարկեց, բայց այս անգամ աւելի բազմաթիւ։ Սրանց հետ էլ միևնոյն ձևով վարուեցին։ Վերջապէս իւր որդուն ուղարկեց՝ կարծելով թերևս նրանից ամաչեն։ Մշակները որդուն տեսնելով՝ իրանք իրանց ասացին—սա ժառանգն է, եկէք սպանենք և այգուն տիրանանք»։ Իսկոյն բռնեցին նրան, այգուց դուրս հանեցին և սպանեցին։ Երբ այգու տէրը գայ, ի՞նչ կասէ մշակներին»։

Նրանք պատասխանեցին. «Զար մշակներին կհեռացնէ և այգին ուրիշին կյանձնէ, որոնք կհատուցանեն ժամանակին պտուղ տալ»։ Յիսուս պատասխանեց. «Այսպէս էլ Աստծու արքայու-



թիւնը ձեզնից կառնուի և կտրուի հեթանոսներին, որոնք ժամանակին պտուղ կտան»։ Փարիսեցիները նկատեցին, որ իրանց է ակնարկում, ուստի շատ բարկացան։ Այնուհետև յարմար ժամանակ էին որոնում բռնելու, բայց վախենում էին ժողովրդից, որովհետև նրան մարգարէի տեղ էր ընդունում։

Գ. Յիսուս շարունակում է իւր յարձակումը աւելի խիստ ձևով—նա խօսեց ժողովրդի և իւր աշակերտների հետ ու ասաց. «Մովսէսի աթոռի վրայ նստեցին դպիրները և փարիսեցիները։ Ըրանք ինչ էլ որ ասեն ձեզ, լսեցէք, բայց նրանց գործերից հեռու կացէք։ Ծանր և դժուարակիր բեռներ են դնում մարդկանց ուսերին, բայց իրանք մատով անգամ չեն ուզում շարժել։ Ըրանց բոլոր գործերը մարդկանց երևալու համար է։ Ընթրիքներում առաջին տեղ են ընտրում, ժողովարաններում առաջին կարգի աթոռների վրայ բազմում. սիրում են փողոցներում իրանց ողջունեն և ռաբբի, ռաբբի անուանեն։ Բայց դուք այդպէս չպիտի անէք»։

«Վայ ձեզ, դպիրներ, փարիսեցիներ՝ կեղծաւորներ, երկնքի արքայութեան դռները փակում էք մարդկանց առաջ—ինքներդ չէք մտնում, մտնողներին էլ արգելում էք։ Վայ ձեզ, դպիրներ, փարիսեցիներ՝ կեղծաւորներ, տասանոր-

դում էք անանուխ, սամիթ և չաման, բայց մո-
ռանում էք օրէնքի ծանր-ծանր կողմերը՝ դա-
տաստանը, ողորմածութիւնը և հաւատը—այս
պէտք է անել, այն էլ չմոռանալ։ Կոյր առաջ-
նորդներ, մժեղները քամում էք, իսկ ուղտերը
կուլ էք տալիս։ Վայ ձեզ, դպիրներ, փարիսե-
ցիներ՝ կեղծաւորներ, բաժակի և սկաւառակի
արտաքին կողմը մաքրում էք, իսկ ներքուստ լի
էք յափշտակութիւնով և անիրաւութիւով։ Վայ
ձեզ, դպիրներ, փարիսեցիներ՝ կեղծաւորներ,
նման էք ծեփած գերեզմանների, որոնք արտա-
քուստ գեղեցիկ են երևում, բայց ներքուստ լի
են մեռելների ոսկորներով և ամեն տեսակ պղծ-
ութիւնով։ Այսպէս էլ դուք, թէև արտաքուստ
արդար էք ցոյց տալիս ձեզ, բայց ներքուստ լի
էք կեղծաւորութիւնով և անօրէնութիւնով։ Վայ
ձեզ դպիրներ, փարիսեցիներ՝ կեղծաւորներ,
դուք մարգարէների շիրիմները շինում էք, ար-
դարների գերեզմանները զարդարում էք և ա-
սում, եթէ մեր հայրերի ժամանակներում ապ-
րէինք, մանակից չէինք լինի նրանց սպանման։
Ուրեմն դուք վկայում էք, որ մարգարէների ըս-
պանողների որդիքն էք։ Դուք օձեր, իժերի զա-
ւակներ, ինչպէս կարող էք փախչել գեհենի դա-
տաստանից»։

«Երուսաղէմ, Երուսաղէմ, դու որ մարգա-
րէներին կոտորում էիր և քեզ ժօտ ուղարկուած-



ներին քարկոծ անում, քանիցս կամեցայ քո զա-
ւակներին հաւի ձագերի նման թևերիս տակ առ-
նել, բայց չկամեցար։ Որովհետև ինձ չսպեցիր,
աւերակ կզառնաս»։

## 48. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Յիսուս ցերեկը քարոզում էր տաճարում,
իսկ գիշերները բարձրանում էր Ձիթենաց լեառը,
ուր սովարաբար իջնում էին գալիլիացիները։
Բոլոր ժողովուրդն առաւօտը վաղ-վաղ գնում էր
տաճարը՝ նրա քարոզը լսելու։

Սրանից եաոյ քահանայապետները, դպիր-
ները և ժողովրդի ծերերը ժողովուեցան Կայիափա
քահանայապետի մօտ և խորհուրդ արին, թէ
ինչպէս Յիսուսին նենգութիւնով բռնեն և սպա-
նեն՝ միայն ասում էին՝ ոչ այս տօնին, որպէսզի
ժողովրդի մէջ խռովութիւն չբնկնի։

Տասներկուսից մէկը՝ Յուդա Իսկարիովտա-
ցին, գնաց քահանայապետների մօտ և ասաց.
«Ի՞նչ կտաք ինձ, որ Յիսուսին ձեզ մատնեմ»։
Նրանք շատ ուրախացան և երեսուն արծաթ
խոստացան։ Այնուհետև Յուդան յարմար ժամա-
նակ էր որոնում Յիսուսին մատնելու։

## 49. ՕՏՆԱԼՈՒԱՑ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԸՆԹՐԻՔ

Ա. Աւագ հինգշաբթի օրը աշակերտները Յի-
սուսի մօտ եկան և ասացին. «Ո՞ւր պատրաս-

տենք Զաքիկը»։ Յիսուս ասաց. «Գնացէք քաղաք այս ինչ մարդու մօտ և յայտնեցէք նրան —վարդապետն ասում է՝ քեզ մօտ պիտի ուտեմ Զաքիկն աշակերտներիս հետ»։ Աշակերտները գնացին և այդպէս էլ պատրաստեցին Զաքիկը։ Երեկոյեան Յիսուս սեղան նստեց տան և երկու



աշակերտների հետ ու ասաց. «Յանկանալով ցանկացայ այս Զաքիկը ձեզ հետ ուտել չարչարուելուցս առաջ»։

Եւ ոյն ընթրիքից վեր կացաւ. հանեց վերևի հանդերձները. մի ղենջակ կապեց մէջքին. ջուր ածեց կոնքի մէջ. սկսեց նրանց ոտները լուա-



նալ և ղենջակովը սրբել։ Կարգը Սիմօն Պետրոսին հասաւ։ Նա թոյլ չտուաւ և զարմանալով ասաց. «Տէր, դու պէտք է իմ ոտները լուանաս»։ Յիսուս պատասխանեց. «Ինչ որ ես այժմ անում եմ, դու չգիտես, եւոյ կհասկանաս»։ Պետրոն ասաց. «Բայց և այնպէս ես երբէք թոյլ չեմ տայ, որ դու ոտներս լուանաս»։ Յիսուս պատասխանեց. «Եթէ չես թողնի, իմ աշակերտը չես լինի»։ Սիմօն Պետրոսն ասաց. «Տէր, եթէ այդպէս է՝ ոչ թէ ոտներս, այլ ձեռներս ու գլուխս էլ լուա»։ Պետրոսը համաձայնեց։ Յիսուս ոտները լուաց. հագաւ վերևի հանդերձները. նորից սեղան նստեց և ասաց. «Գիտէք թէ ես ինչ արի։ Դուք ինձ անուանում էք տէր և վարդապետ։ Ես ձեր ոտները լուացի և դրանով խոնարհութեան օրինակ ցոյց տուի ձեզ։ Այդպէս էլ դուք պիտի անէք միմեանց»։

Ը. Յիսուս այս ասելով՝ հոգւով տրտմեց և ասաց. «Ճշմարիտն եմ ասում՝ ձեզանից մէկը մատնելու է ինձ»։ Այս յայտնութիւնը անսպասելի էր։ Աշակերտները շփոթուած իրար երեսի էին նայում, թէ ում համար է ասում, ոստի ամեն մինը տեղից վեր էր կենում ու հարցնում էր. «Տէր, մի՞թէ ես եմ»։ Յիսուս պատասխանեց։ «Մարդու Որդին կգնայ, ինչպէս որ գրուած է, բայց վայ այն մարդուն, որի ձեռով նա պի-

ոի մատնուէ— աւելի լաւ է, եթէ նա ծնուած չլինէր»։ Այն ժամանակ Յուդան էլ հարցրեց.



«Մի՞թէ ես եմ, վարդապետ»։ Յիսուս ասաց. «Դու ես ասում»։ Յուդան զգաց, ամօթից այլ ևս չը-



կարողացաւ հաչալ նրանց մէջ—իսկոյն դուրս գնաց։ Արդէն մթնել էր։

Երբ Յուդան դուրս գնաց՝ Յիսուս իրան ազատ զգաց, ուստի և ասաց. «Մի փոքր ժամանակ էլ ձեզ հետ կլինեմ. նոր պատուէր եմ տալիս ձեզ—դուք իրար այնպէս պէտք է սիրէք՝ ինչպէս ես ձեզ սիրեցի։ Սրանով ձեզ ամենքը կճանաչեն, որ իմ աշակերտներն էք»։

Դ. Ընթրիքից ետոյ Յիսուս վեր առաւ հացը, օրհնեց, կոտրեց, աշակերտներին բաժանեց ու ասաց. «Առէք, կերէք սա իմ մարմինն է, այսպէս արէք, երբ ինձ կուզենաք յիշել»։ Ետոյ բաժակն առաւ. գոհացաւ. տուաւ նրանց և ասաց. «Խմեցէք ամենքդ, սա իմ արիւնն է, որ թափւում է ձեզ և շատերի մեղաց թողութեան համար։ Երբ կամենաք ինձ յիշել, այսպէս արէք»։

## 50. ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻՄ

Ա. Յիսուսի հոգին վշտերով լիքն էր։ Ընթրիքից ետոյ կարիք զգաց փոքր ժամանակ բնութեան մէջ լինել, ուստի աշակերտների հետ քաղաքից դուրս եկաւ, անցաւ Կեդրոնի ձորը և բարձրացաւ Ձիթենեաց լեռը։ Ճանապարհին Յիսուս ասաց իւր աշակերտներին. «Այս գիշեր ամենքդ էլ կդայթակղուէք, ինչպէս գրուած է—

երբ հովուին կզարկեն, ոչխարները կցրուեն»։ Բայց Պետրոսը՝ պարծենալով ասաց. «Եթէ ամենքն էլ գայթակղուեն, ես հաւատարիմ կմնամ»։ Յիսուս ասաց. «Ճշմարիտն եմ ասում քեզ, այս գիշեր մինչև աքաղաղի կանչելը երեք անգամ կուրանաս ինձ»։ Պետրոսն ասաց. «Եթէ մեռնելու էլ լինեմ, դարձեալ քեզ չեմ ուրանայ»։ Այսպէս էլ միւս աշակերտները կրկնեցին։

Ը. Գիթենեաց լերան վրայ մի պարտէզ կար՝ անունը Գեթսեմանի։ Յիսուս իւր աշակերտների հետ եկաւ այնտեղ և ասաց նրանց. «Սպասեցէ՛ք այստեղ, ես պիտի գնամ աղօթելու։ Եւ նրանից առաւ Պետրոսին և Զեբեդեայի երկու որդուց, փոքր ինչ առաջ գնաց ու ասաց. «Արթուն կացէ՛ք, հսկեցէ՛ք ինձ հետ»։ Այս ասաց, առանձնացաւ պարտիզի մի անկիւնում, երեսի վրայ ընկաւ, աղօթում էր և ասում. «Հայր, եթէ կարելի է, այս փորձութիւնը (բաժակը) հեռացրու ինձնից, բայց եթէ չես ցանկանայ, քո կամքն է»։ Յիսուս դարձաւ աշակերտների մօտ, գտաւ նրանց քնած ու նորից ասաց Պետրոսին. «Այդպէս մէկ ժամ էլ չկարողացաք ինձ հետ արթուն կենալ. կրկնում եմ, արթուն կացէ՛ք և աղօթեցէ՛ք, որ փորձութեան մէջ չընկնէք»։ Երկրորդ անգամ Յիսուս գնաց, աղօթեց և ասաց. «Հայր, եթէ կարելի է, թող այս բաժակն ինձնից հեռանայ,



բայց ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ՝ ինչպէս դու»։ Դարձաւ ու կրկին քնած գտաւ աշակերտներին։ Թողեց նրանց. դարձեալ գնաց.



երրորդ անգամ աղօթեց և միևնոյն խօսքերն ասաց։ Յիսուս մեծ նեղութեան մէջ էր և ե-

ռանդով աղօթում էր։ Այն ժամանակ Աստծու հրեշտակը երկնքից իջաւ և զօրացնում էր նրան,



որպէսզի միշտ այդպէս խօսէ։ Աղօթքից վեր կացաւ, եկաւ աշակերտների մօտ, գտաւ նրանց



քնած ու ասաց. «Բանի՛ քնէք, հասաւ ժամը, երբ Մարդու Որդին պիտի մատնուի մեղաւորների ձեռը։ Վե՛ր կացէք գնանք, ահա մօտենում է մատնիչը»։

Գ. Այս խօսքերը չվերջացրած, Յուդան քահանայապետի և փարիսեցիների ծառաների հետ միասին՝ ներս մտան պարտէզ սրերով, չահերով և լապտերներով։ Մատնիչը նրանց նշան էր տուել և ասել. «Որին ես համբուրեմ, նրան բռնեցէ՛ք»։ Յուդան մօտեցաւ Յիսուսին և ասաց. «Բարև, վարդապե՛տ» և համբուրեց։ Յիսուս պատասխանեց. «Յուդա՛, համբուրելո՞վ ես մատնում Մարդու Որդուն»։ Յիսուս մօտ եկաւ և հարցրեց հետևողներին. «Ո՞ւմն էք ուզում»։ Նրանք պատասխանեցին. «Յիսուս Նազովրեցուն»։ Յիսուս ասաց. «Ես եմ»։ Այն ժամանակ մօտեցան Յիսուսին և բռնեցին։ Բայց Սիմոն Պետրոսը քաշեց իր սուրը, զարկեց քահանայապետի ծառային և նրա ա՛ջ ականջը կտրեց։ Յիսուս ասաց Պետրոսին. «Սուրդ պատեհի մէջ դի՛ր, ո՛վ սուր կվերցնէ, սրով էլ կկորչէ»։ Յիսուս մօտեցաւ ծառայի ականջին բժշկեց։ Եւոյ դարձաւ և իր վրայ եկող ամբոխին ասաց. «Աւազակի՞ վրայ էք դուրս եկել սրերով։ Ես ամեն օր ձեզ մօտ տաճարում սովորցնում էի, ի՞նչու այնտեղ ինձ ձեռը չը-

տուիք»։ Նրանք բռնեցին Յիսուսին և կապեցին։ Բոլոր աշակերտները թողին և փախան։





## 51. ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԻ ԱՌԱՋ

Յիսուսի թշնամիները չէին կարծում, որ այդպէս շուտով կբռնեն նրան, ուստի կարճ ժամանակով տարան Կայիափա քահանայապետի տները Աննայի մօտ՝ իբրև ապահով տեղ, մինչև տաճարի անդամները կժողովուեն Յիսուսին դատելու։ Անանն հին քահանայապետ էր, նա այդ ազատ ժամին հարցուփորձ արաւ Յիսուսին՝ նրա աշակերտների և վարդապետութեան մասին։ Յիսուս պատասխանեց և ասաց. «Ես յայտնի կերպով քարոզել եմ աշխարհին. ես միշտ սովորցրել եմ ժողովրդանոցներում և տաճարումը—ծածուկ ոչինչ չեմ խօսել։ Ինչու ես ինձ հարցնում, լսողներին հարցրու, թէ ինչ եմ քարոզել»։ Սպասաւորներից մինը Յիսուսին ապտակ տուաւ և ասաց. «Այդպէս ես պատասխանում քահանայապետին»։ Յիսուս ասաց. «Եթէ չար բան խօսեցի, ցոյց տուր, իսկ եթէ բարի, ինչու՞ ես խփում»։

Երբ լուր եկաւ, թէ ժողովի անդամները հաւաքուել են, Անանան Յիսուսին կապած ուղարկեց Բարձրագոյն տաճանը Կայիափա քահանայապետի մօտ, ուր դպիրները և ծերերն էին ժողոված։ Պետրոսը հեռուից ծածուկ հետևում էր Յիսուսին տեսնելու՝ թէ ինչով է վերջանում գործը։ Ներս մտաւ բակը և նստաւ ծառաների մօտ։ Յիսուս տաճնում դատւում էր։ Քահանայա-

պետները, ծերերը և բոլոր ատեանը սուտ վկայութիւններ էին որոնում, որ մահու դատապարտեն։ Թէպէտ այստեղ շատ սուտ վկաներ էին բերել, բայց ոչինչ չկարողացան ապացուցանել։ Վերջապէս երկու սուտ վկայ առաջ եկան և հաստատում էին՝ որպէս թէ Յիսուսն ասել է, թէ ես կարող եմ Աստծու տաճարը քանդել եւ երեք օրում կրկին շինել։ Քահանայապետը վեր կացաւ և ասաց Յիսուսին. «Ոչինչ չես պատասխանում քեզ մեղադրողներին»։ Յիսուս լուռ էր, որովհետև իւր թշնամիները միևնոյն ժամանակ իւր դատաւորներն էին, ինչ էլ ասէր, չպիտի ընդունէին։ Քահանայապետն ասաց. «Երդում եմ տալիս քեզ կենդանի Աստծու անունով, ասա, դու ես Մեսիան՝ Քրիստոսը՝ Աստծու որդին»։ Յիսուս պատասխանեց. «Այդ դու ես ասում, իսկ ես ասում եմ ձեզ, որ հիմիկուանից կտեսնէք Մարդու Որդուն Աստծու աջ կողմը նստած, երկնքի ամպերի վրայով գնալիս»։ Քահանայապետը բարկացաւ, պատռեց իւր հանդերձները։ Նրա կարծիքով Յիսուսի այս խօսքերը վիրաւորանք էին Աստծուն, իսկ հրէից օրէնքով Աստծուն վիրաւորողը մահու պատժի էր արժանի, ուստի և ասաց. «Սա Աստծուն հայհոյում է, էլ ինչ հարկաւոր են մեզ վկաներ։ Դուք ինքներդ լսեցիք դրա հայհոյանքը, ինչ էք կարծում, ինչ պիտի անել սրան»։ Նրանք պատասխանեցին և ասացին.



«Դա մահու արժանի է»։ Այն ժամանակ թքեցին նրա երեսին և բռունցքով ծեծեցին, ոմանք էլ ապտակ տուին ասելով. «Մարգարէացիր, Քրիստոս, ով է քեզ զարկողը»։

## 52. ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՎԱԽՃԱՆԸ

Ա. Պատուավարութեան միջոցին Պետրոսը նստած էր բակում։ Մի աղախին մօտ եկաւ և ասաց. «Դու էլ գալիլիացի Յիսուսի հետն էիր»։ Նա բոլորի առաջ ուրացաւ և ասաց։ «Ես նրան չեմ ճանաչում»։ Սրանից ետոյ մի ուրիշ կին եկաւ և ասաց այնտեղ եղողներին. «Սա էլ նազովրեցի Յիսուսի հետն էր»։ Պետրոսը դարձեալ ուրացաւ և երդուեց, որ այն մարդուն չէ էլ ճանաչում։ Փոքր ժամանակից ետոյ այնտեղ կանգնողներն ասացին Պետրոսին. «Ճշմարիտ է, դու էլ նրանցից ես, քո արտասանութիւնից իսկ երևում է այդ»։ Այն ժամանակ Պետրոսն սկսեց անիծել և երդուել, որ այն մարդուն չէ ճանաչում»։ Այս միջոցին աքաղաղը կանչեց։ Հէնց այդ ժամանակ Յիսուսին ատենից դուրս էին բերում, նրան գատապարտել էին։ Յիսուս դարձաւ և նայեց. Պետրոսն իսկոյն յիշեց Տիրոջ խօսքը, որ ասել էր. «Մինչև աքաղա-

ղի կանչելը երեք անգամ կուրանաս ինձ։ Պետրոսը դուրս գնաց և դառնապէս լաց եղաւ»։



Ը. Մատնիչ Յուդան, երբ իմացաւ, որ Յիսուսին դատապարտեցին, զղջաց, երեսուն արծաթը եւ դարձրեց քահանապետներին ու ասաց. «Ես մեղք գործեցի՝ անմեղ արիւն մատնեցի»։ Նրանք պատասխանեցին. «Մեզ ինչ, դու գիտես»։ Յուդան արծաթը ձգեց տաճարի մէջ, գնաց և խեղդուեց։ Քշնամիները ասացին. «Ար-



ժան չէ այդ փողը գանձանակի մէջ ձգել, որովհետև արիւնի գին է»։ Յորհուրդ արին և դրանով



բրուտի ագարակը գնեցին՝ օտարականներին թաղելու համար։

## 53. ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Ուրբաթ լուսաբացին Յիսուսին կապած տարան Պոնտացի Պիղատոսի մօտ, որ երկրի կուսակալն էր։ Իրանք չմտան հեթանոսի պալատը, որովհետև Զատկի ոճնը մօտ էր, կարծում էին կպղծուեն և զատկական դառը մաքուր սրտով չեն կարող ուտել։ Պիղատոսն ինքը դուրս եկաւ նրանց մօտ և հարցրեց. «Ի՞նչ գանգատ ունիք այդ մարդու դէմ»։ Նրանք կոպիտ ձևով պատասխանեցին. «Եթէ սա չարագործ չլինէր, քեզ մօտ չէինք բերի»։ Պիղատոսն ասաց. «Ուրեմն վեր առէք և ձեր օրէնքով դատեցէք»։ Հրէաները ասացին. «Մեր օրէնքը իրաւունք չէ տալիս մահու վճիռ տալ։ Սա մոլորեցնում է ժողովրդին, արգելում է կայսեր հարկ տալ և իրան թագաւոր է անուանում»։ Յիսուս ոչինչ չպատասխանեց քահանայապետների և ծերերի մեղադրանքներին։ Այն ժամանակ Պիղատոսը հարցրեց Յիսուսին. «Չե՞ս լսում, թէ որքան բաներ են վկայում քեզ հակառակ»։ Յիսուս էլի ոչինչ չպատասխանեց։ Կուսակալը խիստ զարմացաւ, ուստի ներս տարաւ պալատը և կարծելով թէ՝ վախենում է հրէաներից՝ այնտեղ հարց ու փորձ արաւ. «Դու հրէաների թագաւոր ե՞ս անուանում քեզ»։ Յիսուս պատասխանեց. «Եթէ ես այս աշխարհի թագաւորներից լինէի, իմ զօրքերը կը-



պատերազմէին և ես հրէաների ձեռը չէի ընկնի —իմ թագաւորութիւնն այս աշխարհից չէ»։ Պիղատոսն ասաց. «Ուրեմն դու թագաւո՞ր ես»։ Յիսուս պատասխանեց. «Դո՛ւ ես ասում, որ ես թագաւոր եմ. ես դրա համար էլ ծնուել և աշխարհ եմ եկել, որ վկայեմ այն ճշմարտութիւնը, որ ես լսել և տեսել եմ Աստծու մօտ»։ Պիղատոսը հեթանոս էր, այն աշխարհի թագաւորութեան մասին հասկացողութիւն չունէր։ Իբրև հեթանոս նա միայն այս աշխարհը գիտէր։ Պիղատոսը բաւականացաւ նրանով, որ Յիսուս ասաց, թէ ես այս աշխարհի թագաւորներից չեմ, ուրեմն կայսեր հակառակ մարդ չէ, ուստի դուրս բերաւ հրէաների մօտ և ասաց. «Ես ոչ մի յանցանք չեմ գտնում Յիսուսի մէջ»։

Հրէաները երբ տեսան, որ Յիսուս չի մեղադրւում, սկսեցին և՛ աւելի զրպարտել և ասել. «Սա ժողովրդին մոլորեցնում է Գալիլիայից սկսած մինչև այստեղ»։ Պիղատոսը, երբ Գալիլիայի անունը լսեց, հարցրեց, թէ արդեօք նա Գալիլիացին է։ Եւ երբ իմացաւ, որ Հերովդէսի իշխանութիւնից է, ուղարկեց նրա մօտ, որ այդ օրերում Երուսաղէմ ուխտ էր եկել։ Պիղատոսի և Հերովդէսի յարաբերութիւնները վատ էին։ Պիղատոսն ուզեց օգտուել հանգամանքից և հաշտուել, ուստի Յիսուսին նրա մօտ ուղարկեց դատելու—սա պատիւ էր Հերովդէսի համար։ Հե-

բովդէսը Յիսուսին տեսնելուն պէս, խիստ ուրախացաւ, որովհետև վաղուց ցանկանում էր նրան տեսնել, շատ բաներ էր լսել նրա մասին և յոյս ունէր, որ մի հրաշք կանէ։ Հերովդէսը շատ բաներ հարցրեց Յիսուսին, բայց ոչ մի պատասխան չստացաւ, որովհետև Հերովդէսը ոչ թէ Յիսուսին հաւատում էր, կարօտ էր զգում նրան լսելու, այլ՝ լոկ հարցասիրութիւն էր նրա կողմից։ Քահանայապետները և դպիրները կանգնած էին և սաստիկ չարախօսում էին նրա մասին։ Հերովդէսը վիրաւորուեց Յիսուսի լռութիւնից, ուստի ծաղրի համար սպիտակ շոր հագցրեց և ետ ուղարկեց Պիղատոսի մօտ։ Այդ օրից սկսած Հերովդէսն ու Պիղատոսը հաշտուեցին։

Պիղատոսն ասաց քահանայապետներին և ժողովրդին. «Դուք այս մարդուն ինձ մօտ բերիք և իբրև ժողովրդի մոլորեցնող ներկայացրիք. ձեր առաջ դատեցի նրան, բայց ոչ մի յանցանք չգտայ։ Հերովդէսն ևս նոյնն է նկատել—սա մահու արժանի յանցանք չէ գործել, բայց և այնպէս սրան թեթև պատիժ կտամ և կարձակեմ»։

Պիղատոսը համոզուեց, որ Յիսուս արդար է, հրէաները նախանձում են, բայց ուղղակի պաշտպանել վախեցաւ, այլ կողմնակի ճանապարհով աշխատում էր ազատել։

Զատկի տօնի օրերն էին։ Կուսակալը, համաձայն սովորութեան, բանտարկեալներից մի-



նին պէտք է ազատութիւն տար, որին ժողովուրդը կցանկար։ Մի նշանաւոր յանցաւոր կար՝ անունը Բարաբբա, որ մարդասպանութեան համար բանտ էր դրուած։ Պիղատոսը ժողովրդին հարցրեց. «Ո՛ւմն էք կամենում, որ արձակեմ, Բարաբբային, թէ՞ Յիսուսին»—չէր կարծում թէ մարդասպանի օգտին ձայն կտան։ Բայց քահանայապետները և ծերերն աղաղակում էին և ասում. «Բարաբբային արձակիր»։ Պիղատոսը հարցրեց. «Իսկ ի՞նչ անեմ Յիսուսին, որին հրէից թագաւոր էք անուանում»։ Ամենքը միաբերան աղաղակեցին և ասացին. «Խաչի՛ր, խաչի՛ր նրան»։ Կուսակալը նորից հարցրեց. «Բայց ի՞նչ չար բան է գործել նա»։ Նրանք և՛ աւելի բարձր ձայնով աղաղակում էին և ասում. «Խաչի՛ր, խաչի՛ր նրան»։ Պիղատոսը տեսաւ, որ այս միջոցով էլ չկարողացաւ օգնել Յիսուսին, դատաւորական աթոռի վրայ նստաւ, որ վճիռը յայտնէ դանգատաւորներին։ Այդ ժամանակ Պիղատոսի կինը մարդ ուղարկեց ասելու. «Այդ արդար մարդու հետ բան չունենաս, երազումս շատ բան տեսայ նրա մասին»։

Սրանից ետոյ Պիղատոսը, հրէաներին դուր գալու համար, պատուիրեց Յիսուսին ծեծել։ Զինուորները փշեայ պսակ դրին գլխին, ծիրանի հագցրին, ալ ձեռը մի եղեգ տուին, ծունկ էին չոքում առաջին, ծաղրում էին և ասում. «Ողջ

կաց, հրէից թագաւոր»։ Եղեգնով խփում էին գլխին և երեսին ապտակում։ Պիղատոսն այսպէս



ծեծուած դուրս բերաւ Յիսուսին պալատից։ Նա փշեայ պսակ ունէր գլխին և ծիրանի հագած, որպէս թէ թագաւոր է։ Պիղատոսն ասաց ժողո-



վրդին. «Ահա այրդ ցձեզ», այսինքն՝ ահա այն անձը, որին դուք ուզում էք մահացնել—սա աւելի շուտ կարեկցութեան՝ քան պատժի արժանի է, սա այնպիսի թագաւոր չէ, ինչպիսին դուք էք կարծում։ Երբ քահանայապետը և ժողովուրդը տեսան նրան, աղաղակեցին. «Խաչի՛ր, խաչի՛ր»։ Պիղատոսն ասաց. «Ես դրա մէջ յանցանք չեմ գտնում»։ Հրէաները տեսան, որ թագաւոր ասելով չեն կարողանում պատժել տալ, սկսեցին ուրիշ բանում մեղադրել,—նրանք ասացին. «Մենք օրէնք ունենք և նա դրա համաձայն պէտք է մեռնի, որովհետև իրան Աստծու որդի է անուանում»։ Երբ Պիղատոսն այս խօսքերը լսեց, վախեցաւ, կարծեց թէ չաստուածներից մինի որդին է, ուստի նորից ներս տարաւ պալատ ու հարցրեց. «Դու ի՞նչ տեղից ես»։ Յիսուս չպատասխանեց, որովհետև Պիղատոսը հեթանոս լինելով՝ գաղափար չունէր երկնքի Աստծու մասին։ Պատասխանէր էլ, նա ոչինչ չէր հասկանայ, այս պատճառով լռեց։ Պիղատոսն ասաց. «Ինձ հետ չե՞ս խօսում, մի՞թէ չգիտես, որ ես իշխանութիւն ունեմ քեզ խաչելու և արձակելու»։ Յիսուս պատասխանեց. «Դու ոչինչ իշխանութիւն չէիր ունենայ ինձ վրայ, եթէ այդ իրաւունքը կայսրից տրուած չլինէր քեզ, այսպէս էլ ես իրաւունքներ ունեմ երկնքի Աստծուց»։ Պի-

դատոն աշխատում էր մի ձևով արձակել Յիսուսին։

Հրէաները սպառնացին կուսակալին — աղաղակում և ասում էին. «Եթէ նրան արձակես, կայսեր բարեկամ չես, ով իրան թագաւոր է անուանում, կայսեր հակառակ է»։ Պիղատոսը, երբ այս խօսքերը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, բեմի վրայ նստեց և ասաց. «Ահա ձեր թագաւորը ձեզ»։ Նրանք աղաղակեցին և ասացին. «Վէր առ դրան և խաչիր»։ Պիղատոսը հարցրեց. «Ձեր թագաւորին խաչեմ»։ Նրանք պատասխանեցին. «Մենք ուրիշ թագաւոր չունենք բացի կայսրից»։ Պիղատոսը երբ տեսաւ, որ խնդրին ուրիշ վտանգաւոր կերպարանք են տալիս, վախեցաւ որ կայսեր չբողոքեն, մանաւանդ իւր յարաբերութիւնն էլ կայսեր հետ այնքան լաւ չէր, ուսաի ջուր առաւ, ձեռները լուաց ժողովրդի առաջ և ասաց. «Ես այդ արդարի արիւնից անմեղ եմ, դուք դիտէք»։ Բոլոր ժողովուրդն աղաղակեց. «Թող դրա արիւնը մեր և մեր որդւոց գլխին լինի»։ Այն ժամանակ Բարաբբային արձակեց, իսկ Յիսուսին ծեծելուց յետոյ՝ յանձնեց նրանց, որ խաչեն։

## 54. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՀԱՊԱՏԻՒՆԸ

Զինուորները հանեցին Յիսուսի կարմիր զգեստը, հագցրին իւր շորերը և տարան խա-



չելու։ Յիսուս ինքն էր տանում իւր խաչափայտը։ Ճանապարհին վայր ընկաւ, որովհետև



յոգնել էր, ամբողջ հինգշաբթի գիշերը չարչարել էին։ Այդ ժամանակ պատահեց Սիմօն Կիւրենացին, որը դաշտի աշխատանքից էր դառ-

նում։ Նրան սպրդեցին, որ խաչափայտը տանէ։ Յիսուսի ետևից մեծ բազմութիւն էր գնում. շատ կանայք լաց էին լինում։ Յիսուս դարձաւ նրանց և ասաց. «Երուսաղէմի աղջիկներ, ինձ վրայ մի՛ լաք, այլ լացէ՛ք ձեր և ձեր որդւոց վրայ, որովհետև կգան օրեր, երբ կասէք լեռներին, թէ ծածկեցէ՛ք մեզ։ Մտածեցէ՛ք փոքր ինչ, եթէ դալար փայտիս հետ այսպէս վարուեցին, չորին ինչ կանեն»։ Երկու ուրիշ չարագործ մարդիկ էլ տարան, որ նրա հետ միասին խաչեն։

Երբ եկան Գագաթին կոչուած տեղը՝ եբրայեցերէն Գողգոթա, Յիսուսին խաչեցին երկու չարագործների հետ—մինին աջ, իսկ միւսին ձախ կողմում։ Ժամը երեքն էր (9), Յիսուս ասաց. «Ների՛ր դրանց, հայր, որովհետև իրանք էլ չգիտեն, թէ ինչ են անում»։ Զինուորները վիճակ ձգեցին և բաժանեցին նրա հանդերձները։ Պահապանները նստել էին այնտեղ և պահպանում էին։ Պիղատոսը մի տախտակ գրեց և խաչի վերևից կախել տուաւ, որ ամենքը կարդան և իմանան, թէ ինչ է նրա յանցանքը։ Տախտակի վրայ գրած էր—Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից։ Այս տախտակը հրէաներից շատերը կարդացին։ Քահանայապետները նեղացան այս գրուածից և ասացին Պիղատոսին. «Մի գրի՛ր հրէից Թագաւոր, գրի՛ր որ ինքն էր ասում, թէ հրէից Թագաւոր եմ»։ Պիղատոսը բարկացած



պատասխանեց. «Ի՞նչ որ գրեցի, գրեցի»։

Զինուորները ծաղր էին անում նրան և ա-



նում. «Եթէ դու ես հրէաների Թագաւորը, փրկի՛ր քո անձը»։ Անցուդարձ անողները հայհոյում էին նրան և գլուխները շարժելով՝ ասում.

«Ո՛վ տաճարը քանդող և երեք օրում շինող, ազատիր քեզ, եթէ Աստծու որդի ես և իջիր խաչից»։

Այսպէս ծաղրում էին քահանայապետները, դպիրները, ծերերը և ասում. «Ուրիշներին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել. թէ նա Իսրայէլի թագաւորն է, թող իջնէ խաչից, այն ժամանակ կհաւատանք նրան»։

Աչքուած չարագործներից մինն էլ հայհոյում էր նրան և ասում. «Եթէ դու ես Քրիստոսը, փրկիր քեզ էլ, մեզ էլ»։ Իսկ միւսը բարկացաւ նրա վրայ և ասաց. «Չես վախենում Աստծուց մեղաւոր տեղովդ։ Մենք իրաւացի կերպով ենք պատժուած, իսկ սա ոչ մի յանցանք չունէ»։ Սա դիմեց Յիսուսին և ասաց. «Տէր, յիշիր ինձ, երբ որ գաս քո թագաւորութիւնովը»։ Յիսուս մխիթարուած պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում քեզ՝ դու այսօր ինձ հետ դրախտում կլինես»։

Այստեղ էին և այն կանայք, որոնք նրա Գալիլիա եղած ժամանակը աշակերտում և ծառայում էին նրան։ Յիսուսի խաչի մօտ էին նրա մայրը, մօրաքոյրը և Մարիամ Մագդաղենացին։ Յիսուս տեսնելով իւր մօրը և Յովհաննէս աշակերտին, ասաց. «Ո՛վ կին, ահա քո որդին»։ Յետոյ աշակերտին ասաց. «Ահա քո մայրը»։



Եւ այն օրից սկսած աշակերտն իրան մօտ առաւ Մարիամին։



Ժամը վեցին (12) խաւարը իջաւ երկրի վրայ — արևը խաւարեց։ Ժամը իննին (3) Յիսուսը բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Էլի՛, էլի՛, լամա սաբաքթանի», այսինքն Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողիր ինձ։ Սրանից յետոյ Յիսուս ասաց. «Ծարաւ եմ»։ Զինուորներից մինը վերցրեց սպունգը, թաթախեց քացախած գինու մէջ և մշակի ծայրին դրած՝ բերանին մօտեցրեց։

Երբ Յիսուս քացախը ճաշակեց, ասաց. «Ամեն ինչ կատարեալ է»։ Յիսուս վերջին անգամ խօսեց՝ ասելով. «Հայր, հոգիս քո ձեռն եմ ա-

ւանգում»։ Այս ասելով՝ խոնարհեցրեց գլուխը և հոգին աւանդեց։ Այդ ժամանակ տաճարի վարագոյրը վերևից մինչև ներքև պատառուեց, երկիրը շարժուեց, ժայռերը պատառուեցան և գերեզմանները բացուեցան։ Հարիւրապետը և պահապանները, երբ տեսան շարժը և եղածները, ասացին. «Ճշմարիտ, որ սա Աստծու որդի էր»։ Ժողովուրդը, որ այս տեսարանը դիտելու համար էր եկել, եղածը տեսնելով՝ կուրծքը ծեծում էր և դղջացած սրտով եւ դառնում։

*Յիսուսի խաչելութեան տօնը կատարում ենք աւագ ուրբաթ օրը՝ ճաշին։*

## 55. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Աւագ ուրբաթ օրը երեկոյեան դէմ Յիսուսին թաղեցին։ Միւս օրը հրէաների Զատիկը էր։ Որպէսզի պատժուածների մարմինները շաբաթ օրը չմնային խաչերի վրայ և Զատիկն ուրախ անցկացնէին, խնդրեցին Պիղատոսին, որ իրաւունք տայ մարմինները խաչերի վրայից վերցնելու։ Պիղատոսը հրաման տուաւ, բայց առաջուց մարդ ուղարկեց, որ մահը ստուգեն։ Զինուորները եկան և չարագործների սրունգները ջարդեցին՝ որպէսզի շուտ մեռնեն բայց երբ Յիսուսին մօտեցան, գտան մեռած։ Զինուորներից մինը՝ նրա մահը ճշտելու հա-



մար, դեղարդով կողը խոցեց—իսկոյն արիւն և ջուր բղխեց։

Սրանից եաոյ Արեմաթեացի Յովսէփը, որ ծածուկ աշակերտ էր Յիսուսի, եկաւ Պիղատո



սի մօտ և խնդրեց նրա մարմինը։ Պիղատոսը զարմացաւ, որ Յիսուս այդպէս վաղ էր մեռել,

սրա համար կանչեց հարիւրապետին և պատուիրեց, որ տեղեկանայ այդ մասին։ Երբ հարիւրապետից էլ ստոյգն իմացաւ, մարմինը Յովսէփին շնորհեց։ Նիկոդիմոս անունով մի ուրիշ ծածուկ աշակերտ ևս եկաւ և բերեց զմուռս, հալուէի հետ խառնած։ Այս նիւթերով Յիսուսի մարմինը զմռսեցին և պատանեցին, ինչպէս որ հրէաների սովորութիւնն էր թաղման ժամանակ։

Յովսէփ Արեմաթացին մի պարտէզ ունէր, որտեղ իրա համար նոր գերեզման էր պատրաստել։ Այդ պարտիզումը թաղեցին Յիսուսին, մի մեծ քար էլ գլորեցին դռանն ու գնացին։ Գալիլիայից եկած կանայքը տեսան Յիսուսի թաղման տեղը։ Սրանք ետ դարձան, խունկ և իւղ պատրաստեցին, որ միաշաբաթին (կիւրակէ) գընան մարմինն օծեն։ Շաբաթ օրը ոչինչ չարին՝ պատուիրանի համաձայն։

*Յիսուսի թաղման տօնը կատարում ենք աւագ ուրբաթ օրը՝ երեկոյեան։*

## 56. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

1. Երբ շաբաթ օրն անցաւ, Մարիամ Մագթաղենացին, Յակովբի մայր Մարիամը և Սաղոմէն վեր առան զանազան տեսակ խունկ և գնացին գերեզմանը Յիսուսի մարմինն օծելու։ Ընդ-



րանք շատ վաղ գնացին՝ արեգակը դեռ նոր էր ծագել։ Ճանապարհին կանայքը միմեանց ասում-էին. «Ո՞վ կգլորէ գերեզմանի քարը»։ Երբ մոտեցան, տեսան, որ քարը գերեզմանից հեռու



էր ընկած։ Մարիամ Մագթաղենացին իսկոյն վազեց Սիմոն Պետրոսի և միւս աշակերտների մօտ ու ասաց նրանց. «Տէրոջը գերեզմանից վեր են առել և չենք իմանում, թէ ուր են դրել»։ Իսկ միւս երկու կանայքը ներս մտան գերեզ-

մանը և տեսան մի երիտասարդ նստած էր գերեզմանի աջ կողմում՝ սպիտակ պատմուճան հագած։ Նրանք խիստ վախեցան։ Երիտասարդն ասաց. «Մի զարհուրէք, դուք խաչուած Յիսուսին էք փնտռում. նա յարութիւն առաւ. այստեղ չէ—ինչու էք կենդանին մեռելների մէջ որոնում։ Գնացէք, ասացէք նրա աշակերտներին և Պետրոսին, որ նա ձեզնից առաջ կգնայ Գալիլիա և այնտեղ կտեսնէք նրան, ինչպէս ձեզ առաջուց էլ ասել է»։ Կանայքը շտապով եկան և պատմեցին տասնումէկ աշակերտներին և ուրիշներին։ Այս խօսքերը անհաւատալի երեւեցան նրանց։ Պետրոսը և Յովհաննէսը շտապով գնացին գերեզմանը և տեսան, որ պատանն առանձին մի կողմն է ընկած։ Նրանք ետ դարձան և խիստ զարմանում էին եղածի վրայ։

2. Մարիամ Մագթաղենացին արդէն ետ էր դարձել և գերեզմանի դուրսը կանգնած լաց էր լինում—նա կարծում էր, որ Յիսուսի մարմինը գերեզմանից մի ուրիշ տեղ են փոխադրել։ Մարիամը նայեց գերեզմանի մէջ ու տեսաւ երկու հրեշտակ՝ սպիտակ շորերով նստած՝ մէկը գլխի կողմը, իսկ միւսը՝ ոտների։ Հրեշտակները ասացին Մարիամին. «Ո՛վ կին, ինչու՞ ես լաց լինում»։ Մարիամն ասաց. «Իմ տիրոջը վեր են առել և չգիտեմ, թէ ո՞ւր են դրել»։ Եւ երբ այս ասաց,



ետ դարձաւ և իրան Յիսուսին տեսաւ, բայց չճանաչեց։ Յիսուս ասաց. «Ինչո՞ւ ես լաց լինում,




ո՞ւմն ես որոնում»։ Մարիամը կարծելով թէ պարտիզպանն է, ասաց. «Տէր, եթէ դու ես վերցրել ասա ինձ, ո՞ւր ես դրել»։ Յիսուս ասաց. «Մա-

բիամ»։ Մարիամը ձայնից ճանաչեց, դարձաւ և ասաց նրան. «Րաբբունի», որ նշանակում է վարդապետ։ Յիսուս ասաց. «Մի մօտենար ինձ, շտապիր և աշակերտներիս ասա, որ ես գնում եմ իմ հայր Աստծու մօտ»։ Մարիամ Մագթաղենացին եկաւ և պատմեց աշակերտներին, թէ նա տեսել է Տիրոջը և պատմեց պատահած դէպքը։

3. Յիսուսի հետաւոր աշակերտներից երկուսը մի ենոյն օրը գնում էին Էմմաուս գիւղը, որ երկու և կէս ժամ հեռու է Երուսաղէմից։ Նրանք իրար մէջ խօսում էին Երուսաղէմում պատահած անցքերի մասին։ Երբ այսպէս վիճաբանում էին, հենց ինքը Յիսուս մօտեցաւ նրանց և գնում էր հետները, բայց նրանք չճանաչեցին։ Յիսուս հարցրեց. «Այդ ինչի մասին էք վիճում և ինչու տրտում էք»։ Նրանցից մինը, որի անունը Կղէոպաս էր, պատասխանեց. «Մի՞թէ դու Երուսաղէմում բնակուող միակ օտարականն ես, որ չգիտես, թէ այս օրերում ինչ բաներ պատահեց այնտեղ»։ Յիսուս ասաց. «Ի՞նչ բաներ»։ Նրանք ասացին. «Նազովրեցի Յիսուս մարգարէին քահանայապետները և իշխանները խաչեցին, բայց նա երրորդ օրը յարութիւն առաւ։ Մի քանի կանայք էլ առաւօտանց վաղ գնացել էին գերեզմանը, մարմինը չէին գտել, եկել յայտնել էին, որ հրեշտակներ են տեսել, որոնք ասել են, թէ



նա կենդանի է։ Մեզանից մի քանիսը գնացին գերեզմանը և գտան իսկ այնպէս, ինչպէս կա-



նայքն էին պատմել, բայց իրան չէին տեսել»։ Յիսուս ասաց նրանց. «Ո՛վ անմիտներ և թու-

լսելրանները, մինչեւ չպէտք է հաւատալ այն բոլոր բաներին, որ մարգարէները գուշակել են։ Չէ որ նրանք յայտնել են, թէ Քրիստոս պէտք է չարչարուէ, որպէսզի իւր փառքի մէջ մտնէ»։ Եւ ըսկսեց խօսել Մովսէսից և բոլոր մարգարէներից, մեկնում էր նրանց, ինչ որ գրքերի մէջ գրուած էր իւր մասին։ Նրանք մօտեցան էմմաուսին, բայց Յիսուս այնպէս էր ցոյց տալիս, որպէս թէ էլի հեռու է գնալու։ Ուղեկիցները սաիպեցին նրան և ասացին. «Մնա մեզ մօտ, իրիկուայ դէմ է»։ Յիսուս մնաց նրանց մօտ։ Երբ սեղան նստեցին, առաւ հացը, օրհնեց, կտրեց և տուաւ նրանց։ Աշակերտներն իսկոյն ճանաչեցին նրան, բայց Յիսուս հեռացաւ նրանցից, աներեւոյթ եղաւ։ Սրանից յետոյ սկսեցին իրար մէջ խօսել և ասել. «Մեր սրտերը ինչպէս բորբոքուում էին, երբ ճանապարհին մեզ հետ խօսում էր և ինչպէս գրքերում գրածները մէկ մէկ ցոյց էր տալիս մեզ»։ Նոյն ժամին վեր կացան, ուրախ-ուրախ դարձան Երուսաղէմ, եկան աշակերտների մօտ և պատմեցին նրանց թէ ճանապարհին պատահածը և թէ ինչպէս հացը կոտրելու ժամանակ ճանաչեցին նրան։

4. Նոյն օրը՝ երեկոյեան աշակերտները հրէաների երկիւղից դռները փակած մի տեղ էին հաւաքուած։ Յիսուս յայտնուեց նրանց և ասաց.



«Ինչո՞ւ էք շփոթուած, ինչո՞ւ էք կասկածում, չէ՞ք հաւատում, որ ես եմ. մօտ եկէք, շօշափեցէք իմ ձեռները և ոտները, կարծում էք ես հոգի եմ. տեսէ՛ք, հոգին մարմին և ոսկոր չունէ»։ Այս ասաց և ցոյց տուաւ ձեռները, ոտներն ու կողը։ Աշակերտները չափից դուրս ուրախացան, որ Տէրոջը մի անգամ էլ տեսան։ Յիսուս դարձեալ ասաց. «Խաղաղութիւն ձեզ, ինչպէս իմ հայրն ինձ ուղարկեց, այնպէս էլ ես ձեզ եմ ուղարկում»։ Այս ասելով փչեց նրանց վրայ հոգին և ասաց. «Առէ՛ք Սուրբ Հոգին, ում մեղքը որ թողնէք՝ թողած լինի, ումը որ կապէք՝ կապած լինի»։

Այդ ժամանակ Թովմաս այնտեղ չէր։ Երբ եկաւ, ընկերները յայտնեցին նրան և ասացին. «Մենք տեսանք Տէրոջը»։ Իսկ նա ասաց. «Մինչև աչքովս չտեսնեմ բևեռների տեղը և մատս չդնեմ վիրաւոր տեղերի վրայ, մինչև նրա խոցուած կողը չշօշափեմ, չեմ հաւատայ»։ Ութ օրից յետոյ աշակերտները կրկին հաւաքուել էին միևնոյն տան մէջ։ Թովմասն էլ նրանց մօտն էր։ Յիսուս փակ դռներից մտնելով՝ կանգնեց նրանց մէջ և ասաց. «Խաղաղութիւն ձեզ»։ Յետոյ դարձաւ Թովմասին և ասաց. «Մատդ այստեղ բե՛ր և տե՛ս իմ ձեռները, շօշափի՛ր կողս, անհաւատ մի՛ լինիր, այլ հաւատացեալ»։ Թովմասը պատասխանեց և ասաց. «Իմ Տէր, իմ Աստուած...»։ Յի-

սուս ասաց. «Թովմաս, դու ինձ տեսար և հաւատացիր, բայց երանի նրանց, ովքեր առանց տեսնելու կհաւատան»։



5. Սրանից յետոյ Յիսուս վերջին անգամ այսպէս յայտնուեց աշակերտներին Տիբերիական (Գալիլիայի, Գեննեսարէթի) ծովի ափին։ Այնտեղ էին Սիմոն-Պետրոսը, Թովմասը, Զեբեդեայի որդիքը՝ Յովհաննէս և Յակովբոս և երկու ուրիշ աշակերտներ։ Սրանք գիշերով ուռկանները ձգել էին ծովը, բայց ոչինչ չէին բռնել։ Առաւօտեան Յիսուս ծովի ափունքն էր, բայց նրան չճանաչեցին։ Յիսուս հարցրեց նրանց. «Ոչինչ չունէ՞ք ուտելու»։ Նրանք պատասխանեցին. «Ոչ»։ Յիսուս ասաց նրանց. «Ուռկանը նաւակի աջ կողմից ձգեցէք, կբռնէք»։ Այսպէս էլ արին նրանք — ուռկանը ձկնով լցուեց՝ այնպէս որ չէին կարողանում քաշել։ Այն ժամանակ Յովհաննէսն ասաց Պետրոսին. «Տէրն է նա»։ Պետրոսը մերկ էր. այս որ լսեց, իրեն ծովը ձգեց. իսկ միւս աշակերտները, որոնք ծովափունքն էին, եկան





ուռկանը քաշելու։ Երբ ցամաք դուրս եկան, տեսան հաց և վառած կրակ, որով ձուկ էին խո-

րովում։ Յիսուս ասաց. «Բերէք ձեր որսած ձկներից ևս, եկէք ճաշեցէք»։ Աշակերտները ձայնից ճանաչեցին։ Ճաշի ժամանակ Յիսուս ասաց Սիմոն Պետրոսին. «Սիմոն՝ Յովհանի որդի, սիրո՞ւմ ես ինձ»։ Նա ասաց. «Այո՛, Տէր, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»։ Յիսուս ասաց. «Արածացրո՛ւ իմ գառները»։ Դարձեալ հարցրեց. «Սիմոն՝ Յովհանի որդի, սիրո՞ւմ ես ինձ»։ «Այո՛, Տէր, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»։ Յիսուս ասաց. «Արածացրո՛ւ իմ գառները»։ Յիսուս երրորդ անգամ հարցրեց. «Սիմոն՝ Յովհանի որդի, սիրո՞ւմ ես ինձ»։ Յիսուս երեք անգամ հարցտալով յիշեցրեց նրա երեք անգամուայ ուրացութիւնը։ Պետրոսը տրամեցաւ այս նկատողութեան համար և ասաց. «Տէր, դու ամեն բան գիտես, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»։ Յիսուս ասաց նրան. «Արածացրո՛ւ իմ ոչխարները։ Ճշմարիտը, ճշմարիտն եմ ասում քեզ, երբ որ պատանի էիր, գոտիդ կապում և գնում էիր, ուր որ դու էիր կամենում, բայց երբ կծերանաս, ուրիշները գոտիդ կկապեն և կտանեն, ուր որ չես կամենում»։

*Ցիսուսի յարութեան օրը մեծ տօն է։ Տօնի անունն է ՋԱՏԻԿ.*



## 57. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ




Յարութիւնից ետոյ Յիսուս քառասուն օր

լէի ՚ին՚ա երկրիս վրայ իւր աշակերտների մօտ և քարոզում էր նրանց երկնքի արքայութեան մասին։ Յառաջնեերորդ օրը նրանց հետ Զիթենեաց լեռը բարձրացաւ և այնտեղ պատուէրներ տուաւ ու ասաց. «Երուսաղէմից չհեռանաք, այլ սպասեցէք հայր Աստծու աւետիքին, որ ձեզ խոստացել եմ։ Ես կուղարկեմ ձեզ համար Սուրբ Հոգին և երբ կընդունէք Նրան, ուրիշ մարդիկ կդառնաք և կվկայէք իմ մասին Երուսաղէմում, Հրէաստանում, Սամարիայում և մինչև երկրի ծայրերը։ Ուրեմն գնացէք ու բոլոր ազգերին քարոզեցէք Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով։ Ուսուցէք նրանց որ պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ պատուիրեցի։ Ով կհաւատայ և կմկրտուէ, նա կփրկուէ, իսկ ով չի հաւատայ, կդատապարտուէ՝ կպատժուէ»։

Երբ այս ասաց, բարձրացրեց ձեռները և օրհնեց նրանց։ Օրհնելու ժամանակը բաժանուեց նրանցից և վերացաւ երկինք։ Մի ամպ ծածկեց նրան աշակերտների աչքից։ Նրանք երկրպագեցին, ուրախ-ուրախ եռա դարձան Երուսաղէմ և սպասում էին խոստացած Սուրբ Հոգուն։

*Ցիտուսի համբարձման օրը տօն է։ Կատարում ենք Զատկից 40 օր ետոյ։ Տօնի անունն է ՀԱՄԲԱՐՁՈՒՄ։*





# Ց Ա Ն Կ

## I


Երես

1. Մարիամ Աստուածածնի ծնունդը և տաճարին ընծայելը . . . . . 3
2. Յիսուսի ծնունդը . . . . . 5
3. Տաճարին ընծայումը . . . . . 11
4. Արևելքի մոգերը և Յիսուսի Եգիպտոս փախչելը 13
5. Տասներկու տարեկան Յիսուս տաճարում . . 18
6. Յովհաննէս Մկրտչի ծնունդը . . . . . 20
7. Յովհաննէսն ապաշխարութիւն է քարոզում . 23


## II


8. Յիսուսի մկրտութիւնը . . . . . 27
9. Առաքեալների ընտրութիւնը . . . . . 29
10. Յիսուս և մանուկները . . . . . 34
11. Աշակերտները վիճում են թէ ո՞վ է մեծ . . . 36
12. Կանայի հարսանիքը . . . . . 37
13. Կափառնայումի հարիւրապետը . . . . . 38
14. Տասն բորոտների բժշկումը . . . . . 39
15. Փարիսեցին և մաքսաւորը . . . . . 40
16. Անառակ որդու առակը . . . . . 42
17. Յիսուս և Զակքէոս . . . . . 45
18. Յիսուս բժշկում է խուլուհամրին . . . . . 46

| | էրես |
|---|---|
| 19. Ողորմած սամարացու առակը | 46 |
| 20. Այրի կնոջ լուման | 48 |
| 21. Չար ծառայի առակը | 50 |
| 22. Քանանացի կինը | 51 |
| 23. Յիսուս քարոզում է Նազարէթում | 52 |
| 24. Հարուստ երիտասարդը | 55 |
| 25. Անմիտ հարսի առակը | 56 |
| 26. Կորուսեալ ոչխարի և դրամի առակը | 57 |
| 27. Յայրոսի դուստրը և Նայինի պատանին | 59 |
| 28. Յովհաննէս Մկրտչի դեսպանները | 61 |
| 29. Յովհաննէս Մկրտչի մահը | 64 |
| 30. Պայծառակերպութիւն | 66 |
| 31. Սերմանացանի առակը | 67 |
| 32. Որոմի առակը | 69 |
| 33. Մեծ ընթրիքի առակը | 70 |
| 34. Յիսուս սաստում է մրրկին | 71 |
| 35. Այգու մշակների առակը | 72 |
| 36. Քանքարների առակը | 73 |
| 37. Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը | 75 |
| 38. Տասն կոյսերի առակը | 78 |
| 39. Վերջին դատաստան | 80 |
| 40. Լերան քարոզը և ինն երանութիւնները | 82 |
| 41. Յիսուսի խօսակցութիւնը լուացման, կերակրի, պահքի և շաբաթը սրբելու մասին | 90 |
| 42. Յիսուս և սամարացի կինը | 93 |
| 43. Մարիամ և Մարթա | 96 |
| 44. Ղազարոսի յարութիւնը | 98 |

ՀԱՏ II

| | |
|---|---|
| 45. Յիսուսի թշնամիները | 102 |
| 46. Յիսուսի օծումը Բեթանիայում | 103 |





| | էրես |
|---|---|
| 47. Յիսուս մտնում է Երուսաղէմ | 105 |
| 48. Յիսուս վիճաբանում է թշնամիների հետ | 108 |
| 49. Յուդայի մատնութիւնը | 113 |
| 50. Ոտնալուայ և խորհրդաւոր ընթրիք | 113 |
| 51. Յիսուս Գեթսեմանում | 117 |
| 52. Յիսուս քահանայապետների առաջ | 123 |
| 53. Պետրոսի ուրացութիւնը և Յուդայի վախճանը | 125 |
| 54. Յիսուս Պիղատոսի առաջ | 128 |
| 55. Յիսուսի խաչելութիւնը | 134 |
| 56. Յիսուսի թաղումը | 140 |
| 57. Յիսուսի յարութիւնը | 142 |
| 58 Յիսուսի համբարձումը | 153 |




Ա 2

446

# ՎՐԻՊԱԿՆԵՐ


| Երես | Սխալ | Ուղիղ |
|---|---|---|
| 7 | Պոնտացի Պիղատոսին | Եղոմացի Հերովդէսին |
| 23 | Պաղեստինում | Յուդայի երկրում |
| 32 | Պետրոս | Սիմոն—Պետրոս |
| 32 | Սիմոն | Սիմոն—Կանանացի |
| 64 | Հերովդէս | Հերովդէս—Անթիպաս |
| 129 | Հերովդէսի | Հերովդէս—Անթիպասի |


002693 5

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0026935

